

« Խօսք » եւ « րչս » երկու համանման բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յախտեալական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Եթէ հոգին չճարգմանէր , չուստորէր ինչ որ միւսը կ'ըսէ , այդ չհասկցուած մտին բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԷ


Ա Ն Ա Հ Ի Տ

ՕՐԹԵՐՈՐԴ ԾՐՋԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐՆԸ

ԱՆԱՀԻՏԻ նախորդ սարիներու հաւաքածուները գնել ուզողները կարող են մեզի դիմել .

Ա. Տարի	30	ֆրանք
Բ. Տարի	20	ֆրանք
Գ. Տարի	12	ֆրանք
Դ. Տարի	12	ֆրանք
Ե. Տարի	12	ֆրանք
Զ. Տարի	12	ֆրանք

Քաղաքական կաղուծեան մասին ուսումնասիրութիւններ

Ա. ԶՕՊՅՆԵԱՆ	Վայրկեանը (1904)	50 սանդիմ
	Հորիզոնը (1905)	25 սանդիմ

Տ Պ Ա Ր Ա Ն

ԿԸ

ՏՊԱԳՐՈՒԻՆ
ԱՅՅԱՐԱՐՏԵՐ
ՏՈՄՍԱԿՆԵՐ
ՆԱՄՍԿԱԳԼՈՒԽՆԵՐ
ԹԵՐԹԵՐ, ՀԱՆԳԷՄՆԵՐ
ևն. ևն.

ՏԻԳՐԱՆ

ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ

Բ Ա Ր Ի Զ 18, Rue des Gobelins, 18, Paris, (13e)



Ամէն տեսակ սպագրութիւն , մախուր , խնամեալ եւ ածանցազիւն :

ԱՆԱԾԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Ազգային, Գրական, Գեղարուեստական

Է. ՏՄԻԻ

ՅՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ

Թ/Վ 7-8

Ա.Լ.ՖՐԵՏ ՏԸ ՎԻՆԵՒԻ

«ԵԼՈԱ»



անրի աը Բենեիէ, Քրանսական արդի բանաստեղծութեան ամենէն նրբարուեստ ներկայացուցիչներէն մին, հետեւեալ տողերը նուիրած է Ալֆրեստ աը Վինեիի «Ելոա»ին՝ իր Դեմֆեր ու Նկարագիրներ (Figures et Caractères) գրքին այն սիրուն ուսումնասիրութեանը մէջ որով Վինեիի գործին բիւրեղային գեղեցկութիւնը կը վերլուծէ:

«Ալֆրեստ աը Վինեի ռահվիրայ մը եղաւ: Մին եղաւ անոնցմէ, եւ հող կը տեսնեմ իր փառքի զխաւոր տիտղոսը, որոնք ժ.Պ. դարուն սկիզբը Քրանսական բանաստեղծութիւնը վերածուցին, վերածուլում ուր ան մաքրուեցաւ ու ճոխացաւ ընդ միշտ եւ որմէ մնացին՝ մըշտապէս կենդանի՝ տեւական ու անմահօրէն դափնեւոր մետայլնիքը:

«Քրանսական բանաստեղծութիւնը, ժ.Բ. դարու ընթացքին մէջ եւ ժ.Պ. դարուն սկիզբը

ները, այնքան մտազուրկ ու կենսաթափ էր դարձած որ ա՛լ ամենաողորմելի գառամութեան էր հասած:

«... Հնօրեայ ու մերօրեայ փերուածները եւ Ելոան վերանորոգեցին Քրանսական բանաստեղծութեան ներշնչումը՝ դասական ու աստուածաշնչական աղբիւրներուն դիմելով վերքստին, եւ զգացումին ու բնութեան դառնալով: Մովսէսը գրական մեծ թուական մըն է: Լեզուն հոն կը վերադառնէ լայնութիւն մը որ կորսուած էր. գոյներ որ շատոնց ի վեր մարած էին, հոն վերստին կ'երեւնային: Հնչական ճկունութիւն մը ոտանաւորը ոգեւորեց: Ելոանով, բանաստեղծութիւնը նորէն գտաւ շնորհ մը որ մոռցուած էր, զմայլելի թափանցկութիւն մը, հոսանուտ ծիածանում մը, գազանի հրապոյր մը, ստուերին ու խորհուրդին զգացումը: Ըսել չէ թէ այս գեղեցիկ քերթուածը կատարեալ է իր բոլոր մասերուն մէջ. բայց անոր արժանիքը կը կայանայ երեւակայութեան նորութեան մէջ ու տեսակ մը մշտապատ ու պսպղուն տամկութեան՝ որով կը տոգորուի անոր մեղամաղձիկ գեղեցկութիւնը: Անշուշտ, ան՝գեռ կը պահէ հեռքեր ժ.Բ. դարուն տիրող բանաստեղծական ողբալի ճաշակէն. հոն կը գտնենք դեռ շարադրութեան եղանակներ որոնք Սէն-Լամպէրի Եղանակները կամ խեղճ Միշոյին Ախորեայի մը Գարունը կը յիշեցնեն: Շարադրութեան կերպեր որոնք սիրելի էին դիւցազններգական եւ վարդապետական գրականու-

թեան եւ որոնց ձախորդ արուեստակութիւնը չի չքմեղանար իր վերգիւեան ծագումովը : Եղոյսին մէջ տեղ տեղ կը հանդիպինք այն երկայն բաղդատութիւններուն որոնք , փոխանակ մտածումը լուսաւորելու՝ անոր վրայ աւելցող փոխաբերութեամբ մը , իրենք իրենց համար կ'ընդլայնուին իբր ճարտարութեան կտորներ : Այսպէս , Ելոյսի հրեշտակային թոփչը , առաջին երգին մէջ , ծնունդ կուտայ Լուսիգիանայի քուրիպրիին թոփչին վրայ յօրինուած բաղդատական հատուածին , որուն տարաշխարհիկ ճշգրութիւնը եւ վարդապետականութիւնը չեն ներդաշնակուիր քերթուածին լուսաւոր ու բազմաբնուան հիւսուածքին հետ :

« Ու դարձեալ , այն հետաքրքրական կտորը՝ որ կը սկսի սա տողով՝

« Երբե՛մն փրքփրադէզ Գլայտ գետին մէկ վաւակը

զարմանալի կը թուի ինչպէս սկովտիական վերարկու մը կիւսթավ Մորոյի նկարի մը մէջ կամ ինչպէս հովուական տիկ մը Սիոնի տաւիղներուն խառնուած :

« Բայց այս քանի մը եզակի սխալներէն զատ , ո՛րքան գեղեցկութիւններ : Ի՞նչպէս ոտանաւորը կ'երգէ , կը փայփայէ , կը մրմնջէ ու կը պաղատի : Եղոս ծնունդն իսկ է արդի բանաստեղծութեան : Մկրտութեան ջուր մը , այդտեղ , կ'օձէ Անարէ Շէնիէի հեթանոս մուսային ձակատը . եւ Եղոսի մաքուր ազամանդն է որ պիտի վերագտնենք , գիշերուան պէս սև , տարօրինակ ապարօշներուն վրայ այն հրեշտակներուն որոնց անկումը կ'երգէ Լամարթին , եւ որ պիտի փողփողի , երկնքին պէս կապոյտ , թագին վրայ Սատանին որուն լուսաւոր վախճանը պիտի երգէ Հիւկօ : »

Այս հիացական տողերուն վրայ պէտք է աւելցնել սա անհրաժեշտ նկատողութիւնը որ Վինսի , թէ՛ Եղոսով , եւ թէ՛ մանաւանդ իր Մովսէս , Ճակասագիրներ , Գայլին մահը , Հովիւի ռուր , Ձիթենեաց պարսեզը փառասուած քերթուածներով , վերանորոգած է Փրանսական բանաստեղծութիւնը ոչ միայն ձեւին մէջ , այլ եւ ոգւոյն մէջ . վեհութիւնը եւ բարձրութիւնը փիլիսոփայական ձգտումներուն զոր Վինսի երգած է այդ հոյակապ կտորներուն մէջ , իրմէ

առաջ անծանօթ էր Փրանսական քնարին ու իրեն հաւասար շատ քիչ է ունեցած նոյն իսկ իրմէ յետոյ եկող ամենաչքեղ բանաստեղծներու գործին մէջ : Ի՞նչ կարելի է , արդարեւ , գտնել աւելի վեհ ու խոր , ամբողջ Փրանսական բանաստեղծութեան մէջ , քան անհուն ցաւատանջ աղաղակը իր գերմարդկային մեծութենէն տառապող փառայեղց բայց չհասկցուած , վախցուած բայց չսիրուած Մովսէսին , կամ վսեմ բողոքը՝ Հովիւի ռուրին մէջ՝ յաւերժագեղ ու անգութ Բնութեան դէմ արձակուած , կամ Ձիթենեաց պարսեզին մէջ , անձկութիւնը Յիսուսին որուն լոկ բարութեամբ ու սիրով լեցուն հոգին կ'ընդվզի ըմբռնել գործը Արարչին՝ որ կեանք կուտայ բայց ոչ երջանկութիւն : Ու ի՞նչ կարելի է երեւակայել աւելի նուրբ ու վրդովիչ քան երկնքին ու Դժոխքին մէջտեղը , տրտում լուսաստուերին ծոցն երկարաձգուող հոգեկան մեծ պայքարի երկանուազը զոր կ'երգեն — զոր կ'ապրին , — Ելոսն ու Սատանը :

« Եղոսն , կը գրէ Էմիլ Ֆակէ՝ իր ԺԹ . դարու Յրանսացի մեծ գրագէտներու մասին « Գրական ուսումնասիրութեանց » հատորին մէջ , Վինսիի ամենէն բարձր , ամենէն մաքուր եւ ամենէն ինքնատիպ յղացումն է . քերթուածը Գթութեան , չարիկ հաւնար գրութեան . մեղքը որ կը սիրուի անմեղութենէն , որովհետեւ մեղքը ամենամեծ դժբաղդութիւնն է . Սատանը որ կը սիրուի հրեշտակէ մը , որովհետեւ հրեշտակի մը համար յանցաւորներու մեծագոյնը ուրիշ բան չէ բայց եթէ դժբաղդներու մեծագոյնը :

. . . Բանաստեղծական յղացումը որով այս գաղափարը կ'արտայայտուի , ա՛լ աւելի գեղեցիկ է : Այդ հրեշտակը որ կը սիրէ Սատանը , սովորական հրեշտակ մը չէ , աստուածաշնչական հրեշտակ մը , ահաւոր ու տարամերժ Աստուծոյ մը զինուորը չէ , այլ մերօրեայ հրեշտակ մըն է , այսինքն Քրիստոսի դուսար մըն է , Յիսուսի աչքէն ինկած արցունքէ մը ծնած : . . . Ամբողջ բանաստեղծական աշխարհին մէջ ոչինչ կայ որ այնքան գեղեցիկ ըլլայ որքան այսպիսի յղացում մը : »

Արտայայտութիւնը՝ իր ամբողջութեանը մէջ՝ այնքան կատարեալ չէ դժբաղդաբար որքան յղացումը : Վինսի , որ թերեւս ամենէն վեհօգին է Փրանսացի բանաստեղծներուն , անհաւասար

է իբր արուեստագէտ . եւ Երոան , բաց ի ոճի տկարութիւններէն՝ որոնց մէկ քանին մատնանիչ ըրած է Հանրի սը Րէնեիէ , նոյն իսկ դադարին մարմնաւորմանը եղանակին մէջ ունի պակասութիւններ որոնք պահ մը կը խառնաչըփոթեն , կը մթնցնեն գաղափարը : « Երոան , կ'ըսէ Ֆակէ իր նոյն ուսումնասիրութեան մէջ , ինք իրմէ վար կը մնայ եւ գրեթէ անհաւատարիմ կը դառնայ ինք իրեն՝ իր ընդլայնման վերջին մասին մէջ : Յորքան բանաստեղծը՝ իր գթութեան չափազանցութեամբն իսկ ինկող հրեշտակին յղացմանը վրայ կը կենայ , անգուգահան է : Բայց երբ Երոան Սատանին գէմը կը բերէ , չեմ գիտեր թէ ե՞ս եմ որ չեմ հասկնար , բայց ինծի կը թուի թէ բանաստեղծը իր մտածման թելը կը կորսնցնէ , եւ ա՛յ չ'ըսեր ինչ որ կ'ուզէր ըսել : Սատանը սիրային յայտարարութիւն մը կ'ընէ , իրա՛ւ՝ զմայլելի ոճով , բայց որ հասարակ Տոն Ժուանի մը յայտարարութիւնն է . գալով Երոային , գրութեանն չի այլ եւս որ կ'իյնայ , այլ ինչպէս կ'իյնան սովորաբար .

— Եկո՛ւր :
 — Աքսորութի՛մ երկնքէն : — Ի՞նչ փոթ եծէ զիս կր սիրես :
 — Կր սիրեմ քեզ , ու կ'իջնեմ : Բայց երկինքն ի՞նչ պիտի ըսէ :

« Մայրս ի՞նչ պիտի ըսէ » : Չէ՞ք կարծէր որ դործը բոլորովին կը փոխուի հոտ : Երոա Բրիտտոսի դուստրն է , Ֆաուսթի Մարկրիթը չէ : Կ'ըմբռնեմ որ սիրէ , բայց իր սէրը գթութեան ծայրագոյն , վսեմ ու խելացնոր ձեւը միայն ըլլալու է . . . » :

Քերթուածին յղացումը՝ վերջին մասին մէջ՝ չփոթ է իրօք . բայց այն եղանակը որով Ֆակէ կը բացատրէ այդ չփոթութիւնը , ճշգրտօրն չի թուիր ինծի : Երոան չէ որ կը փոխուի վերջին մասին մէջ . Սատանն է որ կը փոխուի : Երոան մի՛շտ հաւատարիմ է ինքզինքին , մի՛շտ Գթութիւնն է . ամբողջ քերթուածին մէջ , իր բոլոր արարքները այն միակնորն են զոր կրնար , զոր պարտէր ունենալ Գթութիւնը : Երոա , ըլլալով գերագոյն , բացարձակ , զուտ Գթութիւնը , եւ միայն այդ , չէր կրնար մնալ երկնքին մէջ , ուր բացարձակ երանութիւնը կը տիրէ . գթութիւնը ցաւին քով միայն կրնայ ապրիլ եւ իր ճակատագիրը կատարել : Այն առաջին օրն իսկ ուր

կ'իմանայ գոյութիւնը յաւիտենական խաւարին մէջ տառապելու դատապարտուած երկնավէժ հրեշտակին , անմիջական մղումը զոր կ'ունենայ՝ տեսչ մըն է տառապողին օգնելու , եւ ընդ հուպ կ'իրագործէ իր տեսչը՝ փախչելով երկինքէն ի խնդիր այդ գերազդին : Չեմ գիտեր թէ Վինսիի մտքին մէջ՝ Երոան ունէ՞ր իրօք , ինչպէս Ֆակէ կը կարծէ , այնքան նրբախո՞հ իմաստասիրութիւն , որ գթար Սատանին՝ նոյն իսկ յանցաւոր ըլլալուն համար , ըստ Վինսիի քերթուածին՝ Երոա , երկնքէն փախած միջոցին , չի գիտեր իսկ թէ Սատանն է այդ գերազդը զոր կ'երթայ փնտռել , եւ եթէ հրեշտակները իրեն խօսած են անոր յանցանքին մասին , շատ տարտամ ձեւով են խօսած , եւ Երոա որոշապէս չի գիտեր թէ ինչի՞ մէջ կը կայանայ այդ յանցանքը : Ինծի կը թուի թէ Երոա կը գթայ անոր՝ ամէն բանէ առաջ որովհետեւ գերազդ է . իր գութը չի կասիր՝ անոր յանցաւոր ըլլալուն պարագայէն , (որովհետեւ գերագոյն գթութեան առջեւ՝ տառապանքը միայն գոյութիւն ունի , ինչ ալ ըլլան զայն յառաջացող պատճառները) . այդ պարագան թերեւս իսկ կը շեշտէ իր գութը , բայց անոր գլխաւոր ծնուցիչը չէ : Երոա կ'ուզէ երթալ օգնել գերազդին . թերեւս կը խորհի կարենալ վերականգնել , մաքրագործել եւ դարձնել զայն իր նախկին լուսեղէն ու երանաւէտ բաղդին , բայց ամէն բանէ առաջ կ'ուզէ անոր ցաւն ամոքել , քանի որ ան կը տառապի , ամենէն լքուած ու արհամարհուած , ամէն սէրէ զրկուած : Երբ իր երկնաւոր ընկերները կը զարմանան որ ինք իր սիրտը ո եւ է հրեշտակի կամ սերտքէի չի տար , էն կը պատասխանէ դմայլելի բառով մը որ իր էութիւնը ամենայն յստակութեամբ կը սահմանէ .

Բայց անոնցմէ ոչ մէկը պէտք ունի էսոր որ կը սփոփէ...

Ու կ'երթայ « սփոփել » այն միակ գերազդը որուն գոյութիւնը գիտէ :

Սատանին հետ դէմ առ դէմ դալէ յետոյ , երբեք իր ինքնութիւնը չի կորսնցնէր : Իր անմեղութեան , մաքրութեան , գեղեցիկութեան ամբողջ հմայքովը նախ կը ճգնի զայն բարձրացնել իր անկումէն եւ դարձնել՝ զղջումի եկած՝ Աստուծոյ ստքը , գերագոյն երջանկութեան ծոցը :

Չի սիրեր Սատանը՝ ինք իրեն համար, ոչ ալ անոր ցոյց տուած հեշտական հրապոյրներուն համար . կը սիրէ զայն՝ միայն իր ցաւին համար, կամ աւելի ճիշդ՝ անոր ցաւն է որ կը սիրէ . եւ իր սէրը աւելի խոր կը դառնայ հիւսայ որ իր աչքովը կը տեսնէ տառապիլը դժբաղդին . իր այդ սիրոյն մէջ ոչինչ կը մտնէ ետական ու մարմնաւոր, ոչինչ որ հաճոյքի, վայելման ցանկութիւն մասնէ . Սատանին խօսքերէն՝ միայն անոր վշտակոծ ազաղակները կ'ըմբռնէ . եւ իջնելով դէպ ի Սատանը, չի կորսնցնէր իր կապը Աստուծոյ հետ որմէ՛ ըստ Վինեիի յղացման՝ բղխած է ինքը : Սատանին, որ Աստուծոյ դէմ իր ատելութիւնը բաց է բաց պողալով հանդերձ, բունն սէր մը կը յայտնէ Ելուային, էն կ'ուզէ սա հարցումը՝ վսեմ իր միամտութեան մէջ, եւ որ ցոյց կուտայ թէ էն կը մնայ միշտ ինք իրեն հաւատարիմ :

Բայց ի՞նչպէս կը սիրես զիս եմէ Աստուած ըստ սիրեր:

Չի յաջողիր Սատանը դարձնել Աստուծոյ բայց ինքզինքը անկարող կը զգայ դժբաղդը ձգելով երկինք դառնալու . եւ ոչինչ աւելի գեղեցիկ է — եւ աւելի բնական, — քան պայքարը որ այդ պահուն իր հողիին մէջ կը սկսի . ատի բուն « մարդկային » տարրն է Ելուային մէջ, եւ առանց այդ տարրին, ո եւ է յղացում անկենդան կը մնայ ու ցուրտ . հին աշխարհին բոլոր դիցաբանական յղացումները, քրիստոնէութեան բոլոր ըմբռնումներն Աստուծոյ, հոգիներու, հրեշտակներու, Սատանայի, արքայութեան, դժոխքի, մեր հողիին ու մեր կեանքին առաւել կամ նուազ տեսլականացած արտարձակումներն են անհունին մէջ . եւ եթէ Հոմերի աստուածները կամ Միլտոնի Սատանան եւ կամ կէօթէի Մեֆիսթոֆէլէսը տարօրինակէս կենդանի են, « մարդկային » ըլլալուն համար է որ կենդանի են . բնագանցական միակտուր էակներ զուրկ պիտի ըլլային շարժումէ եւ տաքութիւնէ, ոչ մէկ յուզում պիտի չազդէին մեզի, պիտի ըլլային ստուերներ որ չեն ապրիր : Ելուան « ապրող » էակ մըն է . իր ինքնութիւնէն չի հեռանար երբեք, բայց կը շարժի, կը գործէ, կը բնաշարժուի՝ իր ինքնութեանը համեմատ :

Պայքարը որ կը ծագի իր հողիին մէջ ահա-

ւոր է որքան բնական : Մնալ Սատանին հետ, կրնայ յանդիլ ուրանալու Աստուած զոր իր ազբերը կը նկատէ, նոյնանալու չարին հետ . լքանել Սատանը եւ դառնալ երկինք ձեռնունայն, անկարելի է իրեն համար, որովհետեւ դաւել է իր բնութեան, իր ճակատագրական դերին դէմ, որ երջանկութիւն վայելել չէ, այլ ցաւը միութարել, ինկածը բարձրացնել : Ահա ինչու կը վարանի, կը տառապի : Ու եթէ վերջ ի վերջոյ կ'որոշէ մնալ, ոչ թէ Սատանին գիրկն իյնալու եւ անոր առաջարկած հեշտանքները վայելելու համար է, այլ զայն փրկելու վերջին ճիգի մը յոյսովը . այն երկու տողը զոր կը յիշէ Ֆակէ, եւ որոնք իրօք հասարակ սիրահարութեան բառեր կը թուին, աւելի գրականապէս տկար են քան յղացմամբ . ձեւի թերութիւնը խաթարած է հող Վինեիին մտածումը . « կ'իջնեմ . . . » կ'ըսէ Ելուա, բայց կ'աւելցնէ՝ վրդոված, շուարած « Ի՞նչ պիտի ըսէ Երկինքը » . ու Ֆակէ կը մոռնայ որ ճիշդ այդ պահուն Ելուա կը լսէ հրեշտակներու խումբ մը որ կ'անցնի իր գլխուն վրայէն ու կ'երգէ :

Տիեզերքին մէջ բովանդակ՝ յաւերժապէս փառք անոր, Որ ուրիշին փրկութեան համար իր անծը կը զոհէ :

Լսելով « անձնագոհութեան » այդ գերագոյն ներբողը զոր Երկնքին ձայներն իսկ կը հնչեցնեն, քաջալերուած այն մղումին մէջ ուր իր բնազդը զինքը կը գահավիժէ, Ելուա վերջապէս կը թօթափէ վարանքը եւ կ'իջնէ դէպ ի Սատանը որ կը պաղատի . այդ էջըը կրնայ աստուածաբաններու աչքին թուիլ անկումը Ելուային (նոյն իսկ Վինեի այդպէս նկատած է զայն՝ քանի որ « Անկում » անուանած է իր քերթուածին երրորդ երգը), բայց ինքնին՝ անկում չէ . Ելուա չի չարափոխուիլ ատով . իր էութեան տրամաբանութեան մինչեւ ծայրը կ'երթայ . ինքզինքը կը զոհէ, — միշտ առաջնորդուած՝ Դժբաղդը փրկելու, գէթ սփոփելու միակ բաղձանքէն : Երբ ա՛լ Սատանին ձեռքն է ինկած, եւ երբ ան՝ զիմակը վար առնելով՝ յաղթական հրապուրելի վատ հրճուանքով մը կը յայտնէ էնոր թէ ա՛լ իրն է, թէ ա՛լ վերջնապէս զրկուած է երկնքէն, թէ ա՛լ իրեն պէս ոճրագործ մըն է, Ելուա նորէն ունի բոտ մը

անհունապէս սրտաշարժ , եւ որ նորէն զուս
գթութենէն կը բղխի .

« Գէթ աւելի երջանիկ պիտի ըլլաս . . . »

Նոյն իսկ այդ պահուն՝ հակառակ Սատանին
որ կը կարծէ իւրացուցած ըլլալ Ելոան , էն կը
մնայ՝ ինծի համար՝ ինչ որ էր , — պաշտելի ու
միշտ մաքուր Գթութիւնը :

Սատանն է որ « կը փոխուի »՝ ըսի վերեւ :
Եւ իրօք , ինկած հրեշտակին զէմքը՝ յեղյեղուկ ,
հակասական ու շփոթ է այս քերթուածին մէջ :
Երբ կը յայտնուի Ելոային , ապականաւոր ու
մեղկ , հեշտականօրէն թունալից երեւոյթ մը
ունի , — հրաշալի՛ իբր պատկեր . Հրապուրիչն
է , Օձը՝ իր զմրուխտէ քաղցրականանչ աչքե-
րուն , իր խայտաբղէտ ու կարծես ականակուռ
մետաքսահիւս մորթին ձգողական ու վտանգա-
ւոր հմայքովը , զոր կը սաստկացնէ դիւթու-
թիւնը ամենափափուկ ու նրբագանակ ձայնի
մը , նման « առաւօտեան անուշ հովիկին » , որ ,
« անտառներու խորը »

Իր հաւաքները կը սկսի շրջնաճիւղով մ'անորոշ
Որ ցամաքը կ'արթնցնէ եւ ծովը թունդ կը հանէ . . .

Բայց երբ կը սկսի խօսիլ , երեւան կուգայ
հոգի մը հպարտ , ըմբոստ ու միանգամայն քրն-
քուշ ու կաթոգին , որ չի համաձայնիր այդ
ասիական մեղկապաճոյճ ու ախտավարակ ցո-
փութեան ծպտումին հետ որով զայն կը ներ-
կայացնէ բանաստեղծը :

Այդ հոգին՝ զոր մանրամասնօրէն պիտի վեր-
լուծեմ ստորեւ՝ չի տեսեր Սատանին մէջ մին-
չեւ վերջը . երբորդ Երգին վերջերը , Սատանը
կը թուլնայ , կը կորսնցնէ իր ընդվզումի սէզ
եւ ինքնավստահ շեշտը , ինքզինքը իրօք չարա-
գործ կը նկատէ , կը զղջայ Աստուծոյ զէմ ա-
պրստամբած ըլլալուն , կը ցաւի իր նախկին
հաւատքը կորսնցուցած ըլլալուն , կը կարօտնայ
իր երբեմնի կեանքը — երկնաւոր ծառայի կեան-
քը , որուն վրայ պահ մ'առաջ արհամարհանքով
կը խօսէր .

Անիծուած ըլլայ վայրկեանն ուր Աստուծոյ հետ ջափ-
ուեցայ .

Ո՛վ սրբոյ պարզութիւն , որմէ ընդմիշտ բաժնուեցայ ,
կը դողամ քու առջեւդ , եւ սակայն քեզ կը պաշտեմ .
. . . Ի՞նչ եղաք դուք , ո՛վ երկնային օրեր , օրեր խա-
ղաղութեան ,
Երբ կ'երթայի , ե՛ս առաջինը համեստ այդ հրեշտակներուն ,
Ծնրադիր աղօթել հին Օրէնքին առջեւ . . .

Եւ այս խօսքերը՝ Ելոան խաբելու համար
իբր կեղծիք չէ որ Վինիի դրած է Սատանին
բերանը . Սատանը ատոնք մտովին կ'արտասա-
նէ , առանց Ելոայէն լսուելու . անկեղծ է՝ նոյն
իսկ ըստ Վինիի՝ ատոնք խորհած պահուն :

Քիչ յետոյ , նորէն կը փոխուի , եւ դարձեալ
կ'ըլլայ Հրապուրիչը , կորուսիչը՝ ինչպէս երեւ-
ցաւ առաջին պահուն , բայց այժմ աւելի մոայլ
աւելի ուժեղ նկարագիր մ'ստացած , գիշակեր
թռչունի , քանդիչ գազանի , անմեղութիւններ
լափող Ոսորի վայրագ նկարագիր մը :

Տիպարը կրնար հասկանալի ըլլալ եւ իր յեղ-
յեղմանց մէջ տրամաբանական մնալ ու « մարդ-
կային » , եթէ միայն Վինիի անոր ըսել տուած
չըլլար այն բոլոր առաջին գմայլելի խօսքերը
— զոր Ֆակէ կը սխալի « հասարակ Տոն Ժու-
անի յայտարարութիւն » անուանելով : Այն ատեն
պիտի ունենայինք դասական Սատանը , պար-
զապէս չար , պիղծ ու նենգ , մաքրութեան ու
գեղեցիկութեան թշնամի , Աստուծոյ զէմ ըմբոստ՝
որովհետեւ ինքը խաւարն ու ոճիրն է եւ Աստ-
ուած լոյսն ու բարին , եւ սակայն՝ առանց իր
այդ հիմնական նկարագիրը կորսնցնելու՝ տե-
սակ մը մերօրեայ նրբութիւն եւ բարգութիւն
ստացած , քիչ մը հիւանդոտ ու ռոմանդիկ ,
զժգոհ ինք իրմէ , մերթ զգալով իր սգեղու-
թիւնը , զղջալով իր գործած ոճիրին համար ,
ցաւով յիշելով իր երբեմնի մաքրութիւնը , տա-
ռապելով տիեզերական անէծքէն ու արհամար-
հանքէն որով պաշարուած է , — զղջում , կա-
րօտ ու ցաւ որ կը շեշտուին ի տես Ելոայի
հոգւոյն գերագոյն անրժութեանն ու դերերջա-
նիկ պայծառութեանը , այնպէս որ պահ մը
Հրապուրիչն է որ վտանգին մէջ կ'իջնայ հրա-
պուրուելու անմեղ Հրեշտակէն . զոր կ'ուզէ իր
ճանկն անցընել : « Այդ » Սատանը շատ բնա-
կան է որ ունենար նաեւ վարմունքը զոր Վինիի
իրեն կը վերագրէ քերթուածին ամենէն վերջը .
թօթափելով իր վաղանցուկ միտումը զէպ ի
մաքրութիւն , վերստին մտնելով իր սեւատարր

ինքնութեանը խորքին մէջ, ան կը հաւաքէ իր կեղծիքի, հրապուրանքի եւ ուժի բոլոր միջոցները, ու անգամ մը եւս՝ եւ ամենահզօր ու ճարպիկ կերպով՝ շարժելով Ելուային մէջ էական լարը, գթութեան լարը, կը յաջողի յաղթել էնոր վարանուճներուն, իրեն քաշել զէնիկա . ու յաղթանակէն ետքը, կը պարծի իր կատարած շարագործութեամբը, ու կը մնայ սակայն միշտ « տխուր », որովհետեւ Չարը՝ նոյն իսկ յաջողումին մէջ՝ անկարող է վճիտ ու անխառն զուարթութեան :

Այս է եղած՝ անտարակուսելի կերպով՝ Վինսիի մտքին մէջ՝ Սատանին յղացման հիմնական կազմածքը : Բայց Վինսիի, էականապէս ազնիւ ու վեհ խառնուածք մը, անկարող եղած է, — եւ ատի շատ շահեկան է հոգեբանօրէն, — իր Սատանը անխառնօրէն չար ու զազիր պահելու . թերեւս առանց զգալու, բնազդաբար, իր անձնական հոգիէն տարրեր խառնած է այդ հոգիին մէջ, տարրեր որ գեղեցիկ են, խրոխտ ու մռայլ գեղեցկութեամբ մը, բայց գեղեցիկ, եւ աղնի՛ւ, — տարրեր որ ոչ միայն շատ բնական է որ յուզած ըլլան Ելուան որ սի՛րտ է համակ, այլ եւ ո եւ է ազատախոհ ընթերցողի մէջ անզիմադրելի համակրութիւն կարող են արթնցնել հանդէպ Սատանին :

Սատանը՝ իր խօսքերուն այդ առաջին երկայն շարքին մէջ, կ'երեւայ իբրեւ պատկերացում մը Արժանապատուութեան, Ազատասիրութեան, Խրոխտութեան, — ու նոյն իսկ սրտցաւ բարութեան . կ'ընդզղի Աստուծոյ դէմ որու մէջ կը տեսնէ ուժ միայն եւ ոչ սէր . ինքը Սատանն է որ, գթալով մարդկային էականներուն, սորվեցուցած է անոնց կեանքի ցաւը մոռնալ սիրատարփիկ երանութիւններուն մէջ, միակ սփոփանքը որ կայ տառապանքին դէմ, եւ որ ոչինչ ունի պիղծ՝ ինչպէս Աստուծոյ « ծառա » ներքը կը հռչակեն . ինքն է որ աւելի եւս քաղցրացնելու համար ցաւը քնացնող հեշտանքները, զանոնք պաշարած է փափուկ, քնքուշ, արբեցնող, շոյող, հրճուեցնող տարրերով որոնք բնութեան փայտներն են .

... Ահաւասիկ Չարագործին գործն աչքերուդ պարզուած . Այդ իբր շար ամբաստանուածք ցաւերու սփոփիչ մըն է, Որ ըստրուկին վրայ կուլայ եւ կ'ազատէ զայն տիրոջմէն,

կը փրկէ զայն՝ սիրոյ շնորհիւ՝ իր էութեան վիշտերէն, եւ ինքն իսկ, Թաղուած ցաւին մէջ զոր անոր ցափ կը զգայ, Ինչ մը հրապոյր կուտայ անոր եւ մոռացումը երբեմն :

Յետոյ, իր պատմութիւնն է որ քանի մը գծով կը պարզէ Ելուային, իր հոգւոյն խորքն է որ կը բանայ էնոր . ինքը առաջին էակն է եղած՝ որ չէ հանդուրժած այն մշտական կոյր անհնազանդութեան, ստրուկ կրաւորականութեան անփառունակօրէն երջանիկ ու տխմարօրէն խաղաղիկ կեանքը զոր Աստուած սահմանադրած է բոլոր արարածներուն, ըմբոստացած է երկնաւոր բռնապետին դէմ որ ուժի օրէնքին վրայ հիմնած է տիեզերական կեանքը . ապստամբած է, չուզելով մնալ ծառայ, եւ արտաքսուած է երկնքէն ու դատապարտուած յաւիտենապէս թափափու մութին մէջ . չի զղջար երբեք հեռացած ըլլալուն երկնքէն ,

Ուր երկիւղը կը տիրէ աստուածներուն մէջը միշտ ...

Բայց կը տառապի, որովհետեւ մինակ է, չհասկցուած, արհամարհուած, ատուած ու անիծուած հրեշտակներէն՝ իր համատարր ընկերներէն, ու սարսափ կ'ազդէ մարդոց, որոնց ինքզինքը բարեբարը կը զգայ . եւ ինքը որ սիրոյ զգացումէն մղուած՝ կատարած է իր յանրոյ զգացումէն մղուած՝ կատարած է իր յանդուգն արարքը, չի սիրուել որ մէկէն, ու զրգազդ է ատոր համար (եւ ամենէն ազնիւ պատճառն է ատիկա զժբազդութեան) :

Ահա ինչու, իմանալով Ելուային ծնունդը, իր բոլոր էութիւնովը սարսուցացած է, որովհետեւ զգացած է որ այդ նոր հրեշտակը՝ որ արցունքէ մը ծնած է, Գթութիւնն իսկ է, միակն է որ թերեւս պիտի հասկնայ զինքը ու թերեւս պիտի սիրէ զինքը . երկայն ատեն կը փնտռէ զէնիկա տիեզերքին մէկ ծայրէն միւսը, ու « լալով » կը փնտռէ . մինչեւ իսկ Երկնքին՝ զոր կ'ատէ՝ կը մօտենայ անգամ մը՝ զէնիկա տեսնելու համար . ու հիմայ, զէն իր դէմն իսկ, իր մօտն եկած, իրեն համար Երկնքէն իջած տեսնելով՝ կը փռէ էնոր առջեւ իր ցաւը, իր հոգին, իր գործը՝ ուղղամտօրէն պարզուած, եւ կը պաղատի էնոր սէրն ունենալու :

Ճշմարիտ է որ Վինսիի ուզած է այդ բոլոր

առաջին խօսքերուն շարքը իբր Ելոան խաբելու եւ հրապուրելու համար սարքուած կեզծիք մը ցոյց տալ :

Գիւթուծին անմեղով հոգիի մ'դէմ սարքուած . . .

Բայց բանաստեղծը, տարուած՝ քերթուածին այս մասին մէջ՝ « ուրիշ » ներշնչուած մը որ իր նկարագրին խորքէն ժայթքած է, շատ աւելի անկեղծութիւն դրած է այդ խօսքերուն մէջ քան ինչ որ ինքը կը կարծէր . անկեղծութիւնը որ այդ բոլոր խօսքերուն մէջ կը դողայ, այնքան ակներեւ է, որ մինչեւ իսկ երբեմն միամտութեան կը հասնի. անմեղ մը խաբել ուզող Սատանը երբեք պիտի չըսէր սապէս խօսքեր որ զոհը զգուշացնել ու խրատեցնել միայն կարող են .

Աքսորեալ մըն եմ ես, զոր դուն Թերես կը փնտռէիր՝ Բայց նախանձոս Ասուծմէյ վախցի՛ր եթէ այդպէս է :

Ճշմարիտ է նաեւ որ ազնիւ ու խրոխտ հոգի մը յայտնող այդ խօսքերու շարքին մէջ կը սպրդին երբեմն բաներ որ Պիղծն ու Նենգաւորը կը յիշեցնեն. բայց ատոնք յառաջ կուգան ներշնչման երկուութիւնէն որ Վինեիի մտքին մէջ պայքարած է . քերթուածին այդ հատուածներուն մէջ՝ հակառակ քանի մը հակասութեանց՝ Սատանը կը մնայ վեհանձն ու մխիթարար, ազատաւէր ու դժբաղդ մաքառողի տիպարը :

Սատանի այս ըմբռնումը, — գէթ ես այնպէս կը կարծեմ տեսնել զայն քերթուածին այդ մասերուն մէջ, որովհետեւ ինծի համար Սատանի ըմբռնումը միշտ՝ նոյն իսկ Ելոան կարգալէ առաջ՝ այդ է եղած, — շատ աւելի գեղեցիկ է քան խաբեքայ կորուսիչի տիպարը զոր աստուածաբանները յօրինած են :

Ճաւալի կը գտնեմ որ Վինեի Սատանի այդ վեհ ըմբռնումին վրայ — եւ միայն անոր վրայ — կանգ առած չըլլայ :

Սատանը՝ այն ատեն՝ պիտի երեւար Ելոային, ոչ թէ հեշտախտաւոր ու ակնախտիդ դիմակի մը տակ, այլ դէմքով մը մտայլ ու վեհ, մտածումով ու ցաւով կրճուած, քաջութիւնով ու խրոխտութիւնով ու սիրով տոգորուած, պարզօրէն գեղեցիկ, առնական ու խորունկ . ան պիտի պատմէր Ելոային այն վեհանձն պատճառ-

ները որոնք զինքը ապստամբեցուցին տիեզերական ինքնակալին դէմ, երբեք պիտի չարտասանէր վատ զղջումի բառերը, ոչ ալ դաւադիր քծնումներուն պիտի զիջանէր, պիտի ըսէր իր անհուն տենչը երջանկութիւն բաշխելու բոլոր ապրող էակներուն, իմաստ մը եւ նպատակ մը տալու տիեզերքին, գէթ՝ սփոփ մը ցաւերուն որ կեանքի իսկութիւնը կը կազմեն, պիտի պարզէր նաեւ իր մենաւոր, հալածուած, արհամարհուած, չըմբռնուած պայքարողի դատնութիւնը, սէրերուն մեծագոյնն ու ազնուագոյնը զգացած ըլլալուն համար սէրէ զրկուած թափառականի տառապանքը, եւ պիտի հրաւիրէր Ելոան իր քոյրը, իր սիրականը, իր գործակիցը ըլլալու : Եւ Ելոան, նոյն իսկ աւելի առաջ երթալով՝ քան Վինեիի քերթուածին մէջ. պիտի իրօք սիրէր այդ զրպարտուած Սփոփիչը, այդ «չարագործ կարծուած Բարերարը»՝ որ իրմէ առաջ արդէն Գթութիւնն էր եղած. Որովհետեւ գթութիւնը շատ աւելի մօտ է ընդվզումին, հակառակ աւերեւոյթ տարբերութիւններու, քան Աստուածութեան, որ Ուժն է, որ տիեզերական հաւասարակշռութիւնը միայն ունի ի նկատի, կեանքի յարահողով մշտնջենաւորումովը միայն կը զբաղի, եւ չ'զբաղի անհասներուն երջանկութիւնովը կամ դժբաղդութիւնովը, անկարող է գթութեան, (ան ինքզինքին դէմ հակասած պիտի ըլլար նոյն իսկ՝ ընդունելով Գթութիւնը, որ ստեղծուածին, սահմանաւորին, վաղանցուկին, տկարին, տառապողին ստեղծագործութիւնն է) : Ընդվզումը եւ Գթութիւնը, Սատանն ու Ելոան, իրարու միացած՝ ազնիւ ու տրտում սիրով մը, իրարմով ուժովցած, միասին պիտի կատարէին Աստուածութեան գործը լրացնելու, « սրբագրելու » պաշտօնը, որ իրենց պաշտօնն է : Եւ այն ատեն, քերթուածը պիտի վերջանար՝ մեր մտքին առջեւ բանալով անհուն եւ լուսաւոր հեռապատկեր մը, — մինչ Վինեիի վերջաւորութիւնը մութ է եւ խղբուկ, անհորիզոն :

Պահպանելով Սատանին աստուածաբանական ըմբռնումը, եւ անոր վրայ իր հոգիէն քանի մը ազնիւ ցուրբեր նետելով, Վինեի հակասական եւ չփոթ դարձուցած է զայն. խրոխտ ու վեհ խօսքերը զարմանալի ու գրեթէ սրանե-

ղիչ կրնան թուիլ այդ ապականարար Կործանիչին բերնին մէջ. իսկ վերջին վաղանցուկ զըզջումը, երկնքին առջեւ նորէն ծնրադրելու, նորէն Աստուծոյ ծառայ մը դառնալու իր բաղձանքը եւ հուսկ ապա իր Կորուսիչի նենգաժէտ դերասանութիւնները կրկնապէս զգուելի եւ անախորժ կ'երեւան՝ այդ նախկին աղւոր խոյանքներէն յետոյ :

Հակառակ բոլոր վերապահումներուն, Եշտան

կը մնայ մին ամենէն վրդովիչ, ամենէն խուճուկ եւ ամենէն հմայիչ գործերէն զոր մարդկային միտքը երկնած ըլլայ . յղացումը հոն կը հասնի մերթ մտածման ամենարարձր կատարներուն, եւ արտայայտութիւնը, սրբան ալ անհաւասար, յաջող կտորներուն մէջ՝ կը պարունակէ ամենէն հրաշալի էջերը իմաստասիրական քնարերգութեան :

ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ



Ե Լ Ո Ա

ԿԱՄ

Հրեւտակներու Քոյրը

ԽՈՐՀՐԴԱՔԵՐԹՈՒԱԾ

ԵՐԳ ԱՌԱՋԻՆ

ԾՆՈՒՆԴ



Երկրի վըրայ ծնաւ հրեւտակ մ'այն օրերուն մէջ երբ անոր Բընակիչները Փրկչին միջնորդութեամբ կ'ազատուէին, իր անշուք ընկերներուն հետ՝ իրեն պէս վըաարանդի, Հեռացեր էր Յիսուս Բեթանիոյ պարիսպներէն . Դաշտավայրին մէջէն խոյս կուտար քայլով մը դանդաղ, Կանգ կ'առնէր՝ մերթ ընդ մերթ՝ աղօթելով ու սփոփելով, Արտի մ'եզերքը նըստած՝ իբր օրինակ ցոյց կուտար դայն, Եւ կամ կը պատմէր Սամարացւոյն առակը, Մոլորած ոչխարին կամ չար հովուին պատմութիւնը, Կամ խաբեբան կը նմանցընէր ճերմակ ծեփուած գերեզմանի . Յետոյ, առաջ տանելով տիրապետումը խաղաղիկ, Մըտիկ կ'ընէր Քանանուհոյն իրեն ուղղած խնդրանքին,

Անառաջնորդ էնոր աղջկան կը ցուցընէր իր ճամբան ,
 Ապա ձեռքերը կը դընէր մանուկներու գլխուն վըրայ :
 Ի ծընէ կոյրը կը տեսնէր , առանց եղածն ըմբռնելու ,
 Բորոտն ու խուշն որ իրար կը տեսնէին ու կ'զպչէին .
 Եւ ամենքն , իբրեւ հրաժեշտ անոր արցունք ձօնելով ,
 Անպատէն ուր Աստուածն աքսորեցին՝ կը մեկնէին :
 Մարդու որդի , ծընունդի չարիքներուն ենթակայ ,
 Ան կը սկըսէր մեծագոյնէն , պանդխտութեան չարիքէն ,
 Իր քաղաքէն հեռանալով , հնազանդելով հրամանին ,
 Ամէն կերպով կատարելու համար ինչ որ գուշակուած էր :

Այդ պահուն իր բարեկամներն , Յուդայի մէջ , կը տեսնէին
 Հասնին իրենց վախճանին զոր յետաձգած էր անիկա :
 Ղազարոս , զոր կը սիրէր , եւ որուն ա՛լ չէր այցելեր ,
 Մեռաւ , բոլորած ըլլալով շարքն իր օրերուն .
 Բայց Աստուծոյ վայելել սէրն՝ ապրիլ ըսել չէ՞ միթէ :
 Մեկնեցաւ գիշերանց . իր ետեւէն կ'երթային
 Մեռնողին մանկամարդ երկու քոյրերն , որոնց մօտ
 Ապաստան էր գըտած իր վրասնգի օրերուն ,
 Մարիամն ու Մարթան . արդ , այն Մարեամն էր էսիկա ,
 Որ անուշ իւղ հոսեցուց , 'ւ ատոր համար պարսաւուեցաւ .
 Կ'ողբային ամենքն . Ի զո՛ւր « կը քնանայ կոր » կ'ըսէր Յիսուս .
 Ինքն իսկ պատանքն ու մեռն'ը տեսնելով՝ արտասուեց :
 — Ո՛վ արցունք սրբազան , բարեկամի սիրոյն ձօնուած ,
 Օ՛հ , հովերուն քրմայքին չը ձրգուեցար դուն . վայրահակ
 Սրորէներուն աղամանդէ սափորը որ մարդոց աչքին
 Անտես է , քեզ քնքշօրէն ընդունեցաւ , եւ ինչպէս
 Հրաշալիք մ'երկրնքին համար անգամ զարմանալի ,
 Քեզ տարաւ՝ ճաճանչաչող՝ հանեց մինչեւ ոտքն Անմահին .
 Մշտաբաց աչքէն ինկած մէկ բարեհաճ նայուածք մը
 Յուզեց եւ փաղփեցուց անճառելի այդ ընծան .
 Եւ Հոգին Սուրբ , անոր վըրայ իր զօրութիւնն հոսելով ,
 Տըւաւ կեանք ու հոգի աստուածային այդ իսկութեան :
 Ինչպէս խունկն որ կ'այրի արեգակին լոյսին տակ ,
 Տեսնուեցաւ այն ատեն ձերմակ էակ մը յարածուն ,
 Որ ծոցէն կը բարձրանար շըլացուցիչ սափորին ,
 Եւ ձա՛յն մը լըսուեցաւ որ կը կանչէր՝ « Ելո՛ս » ,
 Ու հրեշտակն , երեւնալով , « Աւասի՛կ եմ » պատասխանեց :

Երկրնքին հանդէպ որ զէն ըզմայլանքով կը դիտէ ,
 Կ'ընթանայ՝ շքեղ՝ դէպ ի Աստուած , զերդ հարս մը դէպ ի տաճարն .
 Աղւոր ճակատն ինչպէս աղւոր շուշան մը ջինջ է եւ մաքուր :

Ու քողի մը կապուտակ ծալքերը վեր կը վերցընէ .
 էնոր մազերը , խարտեաչ որաներու պէս բաժնուած ,
 կը թողուն կորսուիլ շոգիներուն մէջ օդին
 Իրենց թոյլ ալիքներն , ինչպէս վարսամն երկնաչու
 Գիշերին մէջ կը հալեցնէ իր շառայները փառաշող .
 Վարդ մը , նախկին նշոյլներուն տակ նորածագ առաւօտին ,
 Կուսական կարմրութիւնը չունի թարմ էնոր մոյնքին .
 Եւ լուսինն , որ անտաօին թանձրութեան մէջ լոյս կը սփռէ ,
 էնոր անուշ մէկ նայուածքին անուշութեանը չի հասնիր .
 Արծաթէ են էնոր թեւերն . պատմուճանի մը տակ տժգոյն՝
 Մերթ կ'երեւայ ու կը թաքչի մերթ էնոր ոտքն ըսպիտակ .
 Ու լա՛նջքը , յուզուած , բայց հաղիւ թէ նշմարելի ,
 Վեր կը վերցնէ չըջագրծերը երկնային հիւսկէնին :
 Կին մըն է միանգամայն , հրեշտակուհի մըն է գողտրիկ .
 Ոգիներու այդ ժողովուրդն , այդ ընտանիքը սիրազեղ ,
 Որ մեզի մօտ , մեզի համար , կ'աղօթէ միշտ ու կը հսկէ ,
 Կը միացնէ սուրբ սէրերու մէջ իր մաքուր իսկութիւնը .
 Ռափայէլ հրեշտակապետն , երբ աշխարհիս վըրայ իջաւ ,
 Եղեմի պուրակներուն տակ պատմեց քաղցր այդ խորհուրդը :
 Բայց ոչ մին այդ քոյրերէն զոր ստեղծեց Տէրն անոնց համար ,
 Աւելի խինդ չըբերաւ Երանելեաց Երկնքին մէջ :

Վեց թեւերով պաշարուած Քէրոբէներն հրատուչոր ,
 Սէրորէները , պաշտպան հաւատարիմ սէրերու ,
 Գահերն , Արութիւններն եւ Իշխաններն ու Խանդերն ,
 Պահապան Ոգիներն , Զօրութիւններն , Պերճութիւններն ,
 Ու Երազները բարեպաշտ , ու Ներբողները սրբազան ,
 Բոլոր մաքուր Հրեշտակներն ու բոլոր մեծ Հրեշտակապետք ,
 Եւ ինչքան որ բընակիչ ունի Երկինքն իր ծոցին մէջ ,
 Ամե՛նքն ալ , քողարկուած իրենց ոսկի թեւերով ,
 Ճակատնին ծրոնցին մինչեւ ձիւնէ ոտքերն էնոր ,
 Եւ կոյսերն՝ իր քոյրե՛րը՝ թափօրին միանալով ,
 Ինչպէս բոցերը ցայգական կ'երեւան շուրջը լուսինն ,
 Զեռք ձեռքի տըւած՝ եկան փութացին զէն տեսնելու .
 Կը կախուէին էնոնց անբիծ մէջքէն ոսկի տաւիղներ ,
 Ու ծաղիկներ , զոր բընութիւնն Երկրնքին մէջ միայն բուսցուց ,
 Ծաղիկներ զոր մարդկային ամառներուն մէջ չենք տեսնիր ,
 Կը թափէին էնոնց ձեռքէն ինչպէս անձրեւ յորդառատ :

« Երնէ՛կ » , ձայներ անզուգական օրհներգեցին այն ատեն ,
 « Երնէ՛կ այն աշխարհին որուն վրայէն պիտի սահին
 էնոր քայլերը գըթած : Երբ խեղճերու մէջէն անցնի ,
 Անոնց վըրայ տարածուի՛ պիտի ոգին ըսփոփարար :

Ո՞ր գունան էնոր կը սպասէ քայլն : Ո՞ր դարը զէն կը ցանկայ :
Պիտի ծընի՞ն նոր երկինքներ , որ էն անոնց հրամայէ : »

Օր մը . . . (ի՞նչպէս համարձակիլ օր անունով անուանել
ինչ որ երբեք ոչ նըւազում ունի եւ ոչ վերադարձ .
Մարդկային բարբառներուն աղքատութեանն անմատչելի ,
Յաւերթութիւնը մեր մտքին միշտ քողապատ կը մընայ .
Եւ որպէս զի ըմբռնենք մին այդ հակիրճ վայրկեաններէն ,
Պէտք է անոնց ժամանակի անուններէն մին կիրարկենք) .
Օր մը , անմահ պետութեան բընակիչներն , անխոհեմ ,
Միացան սորվեցընելու էնոր ինչ որ չէր գիտեր .
« Ելո՛ւ , կ'ըսէին , օ՛հ , լաւ հսկէ՛ քու վըրադ .
Հրեշտակներն ալ կընան իշնալ . գեղեցկագոյնը մեր մէջէն
Այլ եւս հոս չէ . եւ սակայն իր մաքրութեանը մէջ նախկին ,
Անիկա կը կոչուէր այն ուր կըրողն է յոյսին ,
Որովհետեւ ան սէր ու կեանք ամենուրեք կը տանէր ,
Աստղերուն կը հաղորդէր հըրամաններն Աստուծոյ ,
Երկիրն անոր կը հռչակէր գեղեցկութիւնն աննըման՝
Լուսաբեր անուանելով առաւօտեան աստղիկը ,
Աղամանդ վառ ի վառ զոր իր ճակատն վրայ շառագոյն
Արեգակն իր ոսկի վարսերուն մէջ է գետեղած .
Բայց կ'ըսեն թէ հիմա պըտակազուրկ է անիկա ,
Թէ կը հեծէ , թէ մինակ է , թէ ոչ ոք զայն կը սիրէ ,
Թէ ոճիրի մը սեւութեամբն անոր աչքերն են ծանրացած ,
Թէ այլ եւրս չի գիտեր խօսիլ լեզուն Երկընքին ,
Մահ կայ բոլոր բառերուն մէջ որոնք կ'ելլեն իր բերնէն .
Կ'այրէ ամէն ինչ որ տեսնէ , կը խամբէ ինչ որ շօշափէ .
Այլ եւրս ո՛չ չարն ըզզալ կարող է եւ ոչ բարին .
Հրճուանք իսկ չ'ունենար իր պատճառած աղէտներէն .
Երկինքն , որուն բնակիչն էր ան , զայն յիշելով կը վրդովի .
Ոչ մէկ հրեշտակ պիտ' յանդգնէր անոր վարմունքը քեզ պատմել ,
Ոչ մէկ հրեշտակ պիտ' յանդգնէր անոր անունն արտասանել : »
Եւ կարծեցին թէ Ելո՛ւ զայն անիծէր պիտի . բայց ո՛չ .
Զարհուրանքն էնոր դէմքը խաղաղիկ չայլալեց .
Ու երկնքին համար ատի եղաւ նըշան մը խոռովիչ .
Էնոր շարժումն առաջին՝ սարսափի դող մը չեղաւ ,
Այլ մերձեցում մը մանաւանդ՝ օգնելու տե՛նչ մը կարծես .
Տրտմութիւնն երեւցաւ շրթունքներուն վրայ սառուցիկ՝
Անմիջապէս որ իր մտքին դժբաղդութիւն մը պարզուեցաւ .
Սորվեցաւ երազել , եւ իր ճակատն անմեղունակ
Այդ անձանօթ վրդովումէն կարմրեցաւ վայրահակ .
Թարթիչներն ի վար արցունք մը կախուեցաւ շողշողուն .
Երնէ՛կ անոնց որոնց սիրտն առջի արցունքն ա՛յսպէս կուլայ :

Ճանչցաւ հրեշտակ մ' այն ցաւերն որ մեր կեանքն ա'յնքան կը խոռովեն
 եւ մեծերն ալ կը հալածեն արքունիքի պերճանքին մէջ .
 Բայց ծոցն իսկ խնջոյքներու , հո՞ծ բազմութեան մէջտեղը ,
 Մարդ մը որ կը հեծեծէ՝ միայնութիւն կրնայ դռնել .
 Ազգերու հանած ժըխորն , ու ժըխո'րն իսկ արքաներուն ,
 Ոչի'նչ՝ անոր սրտին մէջ՝ կը մարէ ձայն մ' հըզօրագոյն :
 Տաւիգնե'ր Արքայութեան , անազըեցիկ մընացիք զուք .
 Կենդանի՛ կառքեր , որոնց աչքերն ունին վառ հրապօյրներ ,
 Ո՛վ զըրահները Տիրոջ , տաղաւարներ սրբավայրին ,
 Արուսեակնե'ր որ Աստուծոյ մատուրներէն կը թափին ,
 Շափիւղանե'ր բուրվառներուն , ոսկի՛ երկնի գմբեթին ,
 Քաղցրութիւննե'ր ներելին եւ բուրումնե'ր կինամոռին ,
 Ձեր ձայները ներգաշնակ , ձեր փայլը պերճ , ձեր հոսն անուշ
 Այդ տխրած հրեշտակին ձանձրացուցիչ կը դառնային .
 Կը խանգարուէր իր երազանքն այդ սրբազան օրհնորդներէն .
 Անոնց մէջ՝ իր խանդակաթ հոգւոյն ոչի'նչ կար համաձայն :
 Կամ երբ նո'յն իսկ Աստուած , զըւարթունները կանչելով ,
 Անոնց ապշած նայուածքներուն իր մեծութիւնը կը յայտնէր ,
 եւ ցոյց կուտար , Երկընքին մէջ՝ ուրկից ծընած է ամէն ինչ ,
 Իր երբեակ զօրութեան խորութիւններն անձառելի ,
 եւ կամ երբ քերոթէներն կը փորձէին ներկայացնել
 Դրուագներ Քրիստոսի կեանքէն եւ կամ սուրբերու ,
 'Ի երկընքին մէջ կը կրկնէին իւրաքանչիւր նոր խորհուրդ
 Որ մեռնոյն ատեններն երկրի վըրայ կը կատարուէր , —
 Օտարական մոգերուն առջեւ պարզուած մըսուրը ,
 Սուրբ ընտանիքն անապատին մէջ , եւ ողջոյնն հովիւներուն , —
 Ելոա , հեռանալով աստուածային այդ թատրոնէն ,
 Քաշուած անոնց բազմութենէն , հեռու՝ փայլուն երկնայարկէն ,
 Կը փնտրուէր ամպ մը որուն մըռայլամած ծոցին մէջ
 Գո'նէ կարենար ազատօրէն երազել :

Հրեշտակները գիշերներ ունին մարդոց գիշերին պէս :
 Աղբիւր չը կայ , Երկընքին մէջ , ականակիտ ու մաքուր .
 Պայծառ ջուր մը կը վազէ հոն աւազի մը վրայ կարմիր .
 Երբ հրեշտակ մ' անկից խըմէ , կը քընանայ , բայց քուն մ' այնպէս
 Որ ամենէն սիրուածն անգամ մեր աշխարհին սիրողներուն
 Պիտի չուզէր կորսընցընել անոր հրապօյրը մենաւոր ,
 եւ ո՛չ իսկ տեսնելու համար՝ իր մօտը նիւրած՝
 Գեղուհին որուն գըլուխը կըրթընած է իր թելին :
 Բայց ի զուր Ելոա կ'ըմպէր այդ քաղցըր ջուրէն ,
 Իր խոռվատանջ ցաւն ատով աւելի խոր կը դառնար .
 Ու մի'շտ , գիշերին մէջ , երազ մը ցոյց կուտար էնոր
 Դժբաղդ հրեշտակ մ' որ հեռուէն իր գըթութիւնը կը հայցէր :
 Կոյսերը , մերթ , ձանջնալու համար էնոր ցաւը ծածուկ ,

Ուղղելով ազաչանք մը չըլլառուած եւ ունայն ,
 Կը խմբուէին էնոր շուրջը եւ նեղիչ հոգածութեամբ
 Կը հարցնէին ի՞նչ գանձեր կ'ուզէր իրեն ընծայէին
 Եւ ի՞նչ զընով պիտի սար յաւերժական իր կեանքը ,
 Քանի որ քիչ կը ցանկար երջանկութեանն Երկընքին ,
 Եւ թէ ինչո՞ւ իր նայուածքներն երբեք չէին փընտրուեր
 Հըրեշտակի մը եւ կամ սերորէի մը նայուածքներն :
 Ելլա մէկ խօսքով մ'անոնց կուտար պատասխան .
 « Ատոնցմէ ոչ մէկը պէ՛տք ունի էնոր որ կը սփոփէ .
 Կ'ըսեն թէ կայ էակ մը որ . . . » Բայց զըլուինին դարձընելով ,
 Կոյսերը խոյս կուտային եւ դայն չէին անուաներ :

Սակայն օր մը , միայնակ , իրենց երկչոտ ընկերուէին
 Իր չորս կողմը կը դիտէ անհուն դաշտերն Երկընքին ,
 Կը բանայ թեւն ու կը ժպտի , թըռիչ կ'առնէ , եւ օդին մէջ
 Կը փընտրուէ իր բարեկամ երկիրն կամ աստղը մ'անբընակ :

Այսպէս , Լուսինայի անտառներուն մէջ խորունկ ,
 Պամպուկներուն ու երկայն լիաններուն տակ օրօրուած ,
 Արեգակէն հասունցած ոսկի հաւկիթը կտարելով՝
 Իր ծաղկազարդ անկողնէն գուրս կ'ելլէ փաղփուն քոլիպըն .
 Անոր զըլուխը պըսակուած է զմբուխտով մը կանանչ ,
 Կոնակին վրայ՝ արդէն պատրաստ է թեւերուն ծիրանին ,
 Ու ճօշանով մը կապուտակ իր մատող կուրծքն է ամրացած .
 Օդական պայքարներուն ան կը դիմէ՝ յաղթական .
 Լուսամօտ տեղերու մէջ պտըտցընել կը տանի
 Իր փետուրները բուստէ որ փոշիէն կը վախնան .
 Իր վայրենի ապաստանին ներքեւ հաւփալը խոռովելով ,
 Աներկիւղ ճանապարհորդն արմաւենոյն վրայ կը թափ .
 Կը լըքանէ նախ դաշտերն՝ առլի անուշ հոտերով .
 Փռասէր՝ դըքիէն կ'անցնի վարդին զամասկեան ,
 Եւ կը կարծէ գտնել կազմածքը բոլոր իր խնջոյքներուն
 Կաղամբաւոր արմաւենոյն վրայ կամ ծոցին մէջ նոճիին .
 Բայց նորածիլ իր թեւերուն համար շատ մեծ են անտառներն ,
 Եւ ծաղիկներն իր բնավայրին բացակայ են այդ տեղերէն .
 Կանաչագիւղ արօտին վրայ կ'իջնէ զանոնք փընտրուել .
 Թուշորս օձերն որ կրնան անոնց ծոցին մէջ թաքչիլ .
 Զայն նըւազ կը խրոչեցնեն քան անտառները երաշտ :
 Զուրբերուն մօտ կը փութայ քաղիլ յասմիկը ֆլորիտեան ,
 Մոլոտիկն՝ իր անարատ բանտերուն խորը պահուրտած ,
 Եւ կլակն անուշահոտ՝ դալարիքին մէջ ծըլած :

Նոյնպէս , Ելլա , ծընած օրէն իսկ ուժեղ ,

Փորձելով զօրութիւնն արծաթափայլ իր թելն ,
 Անցնելով ճերմակ ճամբէն ուր կրթակներ յաւերժարոց
 Աստուծոյ ոտքը կը վառին՝ ինչպէս խումբ խումբ խորաններ ,
 Տատանելով մերթ երկու մոլորակի միջեւ մատղաշ ,
 Մերթ ոտքերը զընելով ճակատն վերայ վարսամներուն՝
 Գտնելու համար այլուր ծընունդ առած էակները ,
 Հասաւ , միայնակ , խորն ըստորին Երկընքին :

Եթերն ունի իր յարկերն անծայրածիր մեծութեամբ ,
 Մինչեւ ըստուերն յաւերժական ուր թոհուբոհը կը սկըսի :
 Երբ հրեշտակ մը խոյս կուտայ անպարագիծ կապոյտէն ,
 Շափիւղազարդ այդ գմբէթէն զոր կը լեցնէ Երբեակը սուրբ ,
 Կը գտնէ օդ մը նըւա՛ղ մաքուր . ամպեր կ'անցնին այնտեղ ,
 Գոլորշիներ կը դառնան հոն , փոթորիկներ կ'օձապտուտքին ,
 Ինչպէս աշխոյժ պահապաններ , Լ'ատոնց անհուն խորութիւնը
 Կը մարէ մեզի համար հուրն Աստուծոյ շնչած օդին .
 Բայց մերին արեւներէն անդին , եւ այն մթնոլորտէն
 Ուր իրենց նեղ շրջանակին մէջ մեր գունակերը կը ճօճին ,
 Միջո՛ցն ամայի , թաղմագին է եւ մըռայլ ,
 Ու սեւ յորձա՛նք մը յամրաքարչ ակօսելով զայն կ'անցնի .
 Լոյս մ'անըստոյդ ու տըժգոյն ամպերն ի զո՛ր կ'լուսաւորէ ,
 Անոնց ներքեւ կայ քաո՛ւսն եւ անձանօթ գիշե՛րը .
 Եւ երբ հով մը հրեղէն անոր խորունկ ծոցը պատէ ,
 Կ'ընդնշմարուի պարսպութիւնն անչափելի եւ անյատակ :

Երբեք մաքուր ոգինե՛րը , զաւակները լոյսին ,
 Այդ երեք ոլորտներուն վերջինն վրայ ուք չեն կոխեր .
 Եւ երբե՛ք չի մոլորի ոչ մէկ աղւոր սերորէ
 Այդ շրփոթ աստիճանին մէջ որուն վերջն է Դըժոխքը .
 Նոյն իսկ քերորէներն , ա՛յնքան ուժեղ եւ անձնուէր ,
 Կը վախնան որ իրենց թեւն այդ պիղծ օդին վրայ կը թու՛լնայ
 Եւ ըստիպուած կ'ըլլան այդ վըտանգաւոր թրփչին մէջ
 Գահավիժիլ մինչեւ խորն աղջամղջուտ քառսին .
 Այն ատեն ի՞նչ կ'ըլլար վիճակն աքսորեալին անպաշտպան .
 Դեւերու ծիծաղին անշիջական թշնամանքը ,
 Անոնց հեգնոտ խօսք ու խաղերն , յամբ եւ անգո՛ւթ անարգանք ,
 Շիկնեցնէին պիտ՛ իր ճակատն , աչքերը վար առնել տային .
 Ու , վըտա՛նդ մեծագոյն , թերեւս ալ ան պիտի ստիպուէր
 Լըսել ե՛րբ մը հեշտական ու զօրովոտ ինքնատուութեան ,
 Կարօ՛ւտ մը Երկընքին , զալարատանջ պատմութիւն մը՝
 Տարաբաղդ հրեշտակի մ'անուշ ձայնովն արտասանուած .
 Եւ նոյն իսկ , խանդաղատած՝ անոր ականջ զընելով ,

Պիտի թերեւս մոռնար իր հայրենիքն երկնային
 Եւ ախորժէր այդ խաւարէն ու բարեկամ այդ կապերէն
 Զոր զըթուլիւնն ու երգերն իրենց միջեւ պիտ' հիւսէին :
 Եւ ա'լ ի'նչպէս վերըստին ելլել կամարը կապուտակ ,
 Յոյց տալով մեծապայծառ եւ ոսկեշող լոյսին մէջ
 Մազեր որոնց ալիքները ցիրուցան են եւ անփայլ ,
 Թեւեր գունաթափ , բազուկներ ու վիզ մը սեւցած ,
 Տըմոյն ճակատ մ'անծանօթ նըշաններով դըրողմուած ,
 Երկընքի բնակիչներու ճակատներուն մէջ պայծառ ,
 Աչքեր որոնց կարմրութիւնը ցոյց կուտայ թէ լացեր են ,
 Եւ ոտքեր դեռ սեփ-սեւ՝ ախտավարակ կրակի մ'բոցէն :
 Ահա ինչո՛ւ համար , միշտ խոհեմ եւ միշտ խմաստուն ,
 Հրեշտակները կը սոսկան այդ տեղերէն անցնելու :

Եւ սակայն , այդտե՛ղ էր , այդ գոլորշւոյն վըրայ մըթին ,
 Որ կոյս Ելուան աներկեւան կը հանգչէր .
 Վըրդովեցաւ էն միայն երբ տեսաւ իր զօրութիւնը
 Եւ բարիքները նորանոր՝ իր երեւմամբը գոյացած :
 Պատժւած աշխարհներ կը թըւէին ըսփոփուիլ .
 Գունտերը կանգ կ'առնէին , որ լըսէին թռչիւն էնոր .
 Եւ եթէ պատահէր որ՝ ճամբաներուն մէջ այդ նոր՝
 Էն անոնցմէ մէկուն դպչէր փետուրներովն իր թեւերուն ,
 Այն ատեն կը լըսէին պահ մը վիշտերը բոլոր ,
 Ոսոխները , զարմացած , իրարու գիրկ կը նետուէին ,
 Դաշոյնները կ'իյնային՝ ատելութիւնը մոռցած ,
 Գերին՝ ժըպտուն՝ կը բալէր միայնակ եւ անշղթայ ,
 Ոճրագործը կը մտնէր դարձեալ տաճարն օրէնքին ,
 Վըտարանդին կը բազմէր թագաւորին պալատին մէջ ,
 Խոռվատանջ քընատութիւնն որսը ձեռքէն կը փախցընէր ,
 Արցունքն ամէն տեղ կը դադրէր՝ ուրախութեան արցունքէն զատ ,
 Եւ մարդոց մէջ հազուագիւտ երջանկութեամբ մը ցանցըւած ,
 Բաժնըւած սիրահարները պըսակուիլ կը փութային :

Ե Ր Գ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

Հ Ր Ա Պ Ո Ւ Բ Ո Ւ Մ

Յաճախ , լեռներու մէջ , որ երկրիս վրայ յաղթ կը ցցուին ,
 կը բացուի հոր մը բընական , խորայտակ ու մեխաւոր .
 Զուրն որ կ'իյնայ երկընքէն , կը մընայ հոն , մութ հայելի ,

Ուր աստղերը գիշերուան՝ կը տեսնուին ցորեկ ատեն :
 Հոն , երբ գեղջկուհին , արագաշարժ չըւանին տակ ,
 Ջուրին խորը մըխըրճէ սափորին կաւը դիւրաբեկ ,
 Կը կենայ անըզբաղ , եւ կը դիտէ երկար , զմայլած ,
 Մոգական այդ պատկերը վեհափայլ աստղերուն ,
 Որ իր ճակատը կը պճնէ կարծես՝ Ջուրին մէջ ընդերկրեայ՝
 Ապարօշով մ'որուն նախանձ պիտի զգար գլուխ մը դշխոյի .
 Այսպէս ալ կոյսն , հակելով քառօն վրայ զոր կ'գիտէին
 Իր գողտր աչքերն , կը կարծէր տեսնել ուրիշ երկինքներ :
 Իր նայուածքներն , անհամար արեւներէն շըլացած ,
 Նախ ոչինչ նշմարած էին բայց վիճ եւ խաւար .
 Այլ ընդհուպ հոն տեսաւ կրակներ կապոյտ ու թափառիկ ,
 Ինչպէս պաղ ճահիճներուն կայծկլտանքները վէտվէտուն .
 Կը փախչէին , կը դառնային , յետոյ նորէն խոյս կուտային .
 Անձնիւր աստղը կարծես մետէորա մ' կը հալածէր .
 Եւ հրեշտակը , ժըպտելով այդ նորակերպ տեսարանին ,
 Աչքովն անոնց բոլորչի թեթեւ թուիչին կը հետեւէր .
 Քիչ ետք՝ իրեն թրւեցաւ որ մեզեզի մը մաքուր
 Կը բղխէր անձնիւր բոցէ՝ ուրիշ բոցի մը միացած , —
 Ինչպէս բաղխումն ողբազին ու ճայնն յտակ ու տարտամ
 Բիւրեղներուն որ օգին անցքին հանդէպ են կախուած ,
 Որպէս զի մանկամարդ Իտալուհին , պալատին մէջ ,
 Քրնանայ՝ Եւողեան ունկընդրելով տաւիղին :
 Այդ շըլունչն հեռաւոր՝ գերբնական երգ մը դարձաւ
 Որ կարծես կը մօտենար դէպ ի աղջիկն Երկրնքին .
 Եւ այդ կրակներն համախմբուած՝ եղան ինչպէս արշալոյսն
 Անակնկալ տըւընջեան մ'որ ծագելու մօտ կը թըւէր :
 Անոր լոյսովը վարդագոյն կ'երեւար ամպ մ'անուշահոտ
 Որ բոցավառ օդի մը մէջ կը բարձրանար մեծագալար ,
 Եւ որ յետոյ՝ յամբօրէն կազմեց իր խաւն ամբոստեան ,
 Նըման այն բաղմոցներուն ուր կը նիւրէ մեղկ Ասիան :
 Հոն , հրեշտակի մը պէս նըստած , երիտասարդ , տրտում , սիրուն ,
 Կերպարանք մ'երկնագեղ տարտամօրէն երեւցաւ :

Երբ մըն փրփրադէզ Քլայտ գետին մէկ զաւակը
 Ոստոստելով ման կուգայ լեռներուն վրայ մըշշապատ ,
 Եւ կ'որսայ թեթեւ այծեամ մը զոր իր փողն ապշեցուց .
 Արվէնի սառոյցներէն մինչեւ մէգերը Քրնայի
 Կ'անցնի լօռուտ ժայռերէն , վիհներուն մէջ կը նետուի ,
 Հեղեղին վրայէն կ'ցատքէ՝ ծառերն ի վար ճօճալով ,
 Կ'իյնայ ոտքով մ'ապահով՝ և իրեն ճամբայ կը բանայ
 Մինչեւ ձիւնն որ տակաւին կոյս է մարդոց քայլերէն .
 Բայց ընդհուպ , մոլորելով զինքը պատող ամպերուն մէջ՝
 Կը փրնարուէ մըրրիկներէն քողարկըւած ուղիներն .

Հոն , շուրերը պըսակող ծիածանի մը ներքեւ ,
 եթէ տեսնէ ամպին խորն ' ւ անոր ցունցին մէջ տարտամ՝
 Անցքը թեթեւ լողիկին Սկովտուհիի մը թափառիկ
 եւ էնոր ձայնն եթէ լըսէ արձագանքին մէջ նըւաղած ,
 Կանգ կ' առնէ կախարդուած , որովհետեւ կը կարծէ
 թէ աչուըներն իր հինաւուրց պապերուն քոյրը տեսան ,
 Որ , ուրուական դեռ սիրատարի , սարսուռացնէ պիտի նորէն՝
 Իր մատներուն տակ թափանցիկ՝ աշերային տաւիղը .
 Այն ատեն կ' ջանայ յիշել ի'նչպէս կոչեց զէն Օստիան ,
 եւ իր ժայռին վըրայ կանգուն , « Էվեր-Քո'մա » կը ձայնէ :

Ոչ նըւազ աղւոր եւ ո'չ նըւազ տարտամ , երեւցաւ
 Դեռ հեռաւոր կերպարանքն աղջամղջին հրեշտակին ,
 եւ ոչ նըւազ հեշտաւէտ կախարդանքներ գրաւեցին
 երկնատոհմիկ կոյսին աչքերն : Ինչպէս կարապ մը նիրհած ,
 Որ , հեռո'ւ ափունքէն , մինաւորիկ , կը յանձնէ
 Իր թեւերն ըսպիտակ ալիքներուն խուսափուկ ,
 Անծանօթ երիտասարդը մեղկօրէն կը յենուր
 Բազուկներուն տակէն փախչող այդ շողեղէն անկողնին .
 Ծիրանիէ էր պատմուծանն , ու բոցաչող եւ կամ տժգոյն ,
 Դիտողին աչքը կը մոգէր արեւակնի երանգներով ,
 Թըխաթոյր էին մազերն , վարսակալով մը սեղմըւած՝
 Որ թագ մըն էր եւ կամ թերեւս բեռ մը ծանր . անոր ոսկին
 Կենդանի էր ինչպէս այն միտախքական կըրակներն
 Որ՝ զարձգարձիկ՝ կը վառէին եռոտանւոյն վըրայ հինաւուրց :
 Ծալըւած էին թեւերն , եւ անոնց գոյնը վատուծ
 Կը յիշեցնէր իրիկուան մըշուշներուն դալկութիւնը .
 Բազմաթիւ ազամանդներ գեղաչընորհ կը շողան
 Ոտքերուն վըրայ փափուկ զոր կը գըրկէ պարոյր մ' ոսկի .
 Մեղկօրէն պաշարուած խորհրդաւոր օղակներով ,
 Բազուկներն ու մատուըները բոլոր՝ աչք կը շըւացնեն .
 Կը շարժէ ձեռքը որ գինուած է մականով մ' ոսկեղէն ,
 Ինչպէս արքայ մ' որ կը տեսնէ լեռնէ մ' անցնիլն իր բանակին
 Ու վախնալով որ իր բաղձանքը լիովին չի կատարուիր՝
 Ժեւթո'վ մ' անհամբեր իր անձնիւր քայլը կը շեշտէ :
 Մըտահող է ճակատն , եւ իր նայուածքը վայրահակ .
 Թերեւս , գիտնալով դիւթական ուժն իր աչքերուն ,
 Աստիճան առ աստիճան կ' ուզէ ցոյց տալ նախ եւ առաջ
 Անոնց շողերը փայփայիչ՝ դեռ իրենց թափը չըզըտած ,
 Կամ թերեւս ալ կը վախնայ այն սկիւմայ կըրակէն
 Որ հոգի հոգիի կը յայտնէ մէ'կ նայուածքի մէջ :
 Ինչպէս խորն սնտառին , առաւօտեան հովիկն անուշ
 Իր հառաչները կը սկսի շըշընչիւնով մ' անորոշ
 Որ ցամա'քը կ' արթնցնէ եւ ծովը թունդ կը հանէ ,
 Յամբօրէն բարձրացնելով իր ձայնը քաղցր ու խորունկ

Եւ աննելով շեշտ մը արխուր ինչպէս ողջոյն մը հրաժեշտի ,
Ահա՛ խօսքերը զոր ըսաւ ան Աստուծոյ աղջրկան .

« Ո՛րկից կուգաս, աղւօ՛ր հրեշտակ, եւ ո՞ւր կ'երթաս: Ի՞նչ ճամբու
կը՞ հետեւին արծաթ թեւերդ որ կը պարզուին օդին մէջ .
Կ'երթաս արդեօք, արեւի՛ մը կեղրոնին մէջ հանգչելով ,
Անոր կարմիր շրջանակին հրուտ վառարանը վարե՞լ ,
Կամ խոովելով սիրահարները սարսափով մը տեսլական՝
Խորութեան մէջ գիշերին անոնց ցոյց տալ հիւսիսա՞յգը .
Կամ թերեւս ցօ՞ղ բաժնել ծաղիկներու բաժակին ,
Եւ կամ կախել լեռներո՛ւն վըրայ գօտի՞ն եօթներփեան .
Քեզ յանձնըւած խընամքն յատուկ՝ հոգիներու վրայ հըսկել չէ՞ ,
Եւ մանկամարդ կիներուն սրտին խօսի՛լ իրիկուան .
Երազի պէս գալ էնոնց բազուկներուն մէջ թաօիլ
Եւ էնոնց բերել որդի՛ մը՝ համբոյրի մը մէջ ծըլած .
Ասոնք են քաղցր պաշտօններդ . գէթ ես այդպէս կը դուշակեմ՝
Տեսնելով հրաշալի գեղեցկութիւնը փառաշող :
Բայց մանաւանդ դուն թշնամի մը չե՞ս արդեօք նորայայտ
Չոր ոսոխս ամենազօր գիս ատելու կը վարժեցնէ :
Ա՛հ, թերեւս դուն ես որ, նախատակի՞ծ ընելով գիս ,
Հեթանոսներս պիտի տանիս մրկըրտութեան աւագանը .
Վասն զի միշտ թշնամիս կը հանէ դէմս՝ յաղթական՝
Կոյս աղջրկան մը նայուածքն եւ կամ արդու մը ձայնը :
Աքսորեալ մըն եմ ես, զոր դուն թերեւս կը փրնատէիր .
Բայց նախանձոտ Աստուծմէ՞դ վախցի՛ր, եթէ այդպէս է .
Որովհետեւ սիրեցի, որովհետեւ փրկեցի ,
Անոր համար է որ հիմա զժբաղդ եմ ու դատապարտուած .
Չիս կործանե՞լ թէ ազատել կուգաս, ամբի՛ժ գեղուհի .
Դուն կ'իջնաս այն երկընթէն որ ինձի շանթը զրկեց ,
Բայց ա՛յնքան քաղցր իմ աչքիս՝ որ չեմ գիտեր ինչո՞ւ համար
Դուն ալ, ո՛վ աղւոր հրեշտակ, վերէն կուգաս ինձի դէմ : »

Այսպէս Ոգին կը խօսէր : Լըսելով այդ ձայնը զբողո՞ող,
Դիւթութիւն՝ անմեղուկ հոգիի մ' դէմ սարքըւած ,
Տեսնելով գողար այդ շողերն ու հանդերձանքը մոզական
Իր եղբայրներն յիշեցընող այդ ա՛յնքան քաղցր հրեշտակին ,
Երկընթի բընակչուհին, իր թեւին տակ քողարկըւած ,
Ընկըրկելով կը բարձրանար աստեղագարդ իր ճամբէն ,
Ինչպէս լոգուհին՝ եղէգներուն մէջտեղէն՝
Կը փախչի լողորէն զոր ջուրին տակ է տեսած .
Բայց ի զուր էնոր երկու ոտքերն ամպէն կ'հեռանային .
Այնքան միայն որքան երկու օր թռչելով՝ աղաւնին

Կը հեռանայ Հալէպէն եւ այն ձերմակ աշտարակէն
Որմէ Սուլթանուհին սիրոյ նամակ մը կը զրկէ .
Նայուածքի՛ մը փայլակին տակ էնոր ուժը փշրեցաւ .
Եւ երբ տեսաւ որ էնոր թեւը՝ նըւածուած՝ վար կը կախուէր ,
Հրապուրող թշնամին շարունակեց ցած ձայնով .

« Ես այն եմ զոր կը սիրեն առանց երբեք ճանչնալու .
Մարդուն վըրայ եմ հիմնած իմ պետութիւնըս բոցեղէն ,
Ըղձանքներուն մէջ սըրաին , երազներուն մէջ հոգւոյն ,
Ըղձանքներուն մէջ մարմնոյն , խորհրդաւո՛ր հեշտութիւն ,
Գանձերուն մէջ արիւնին , նայուածքներուն մէջ աչքերուն :
Ես եմ որ ամուսինն երազին մէջ կը խօսեցնեմ .
Ինձմով աղջիկն երջանիկ կ' ուսնի սուտեր երանաւէտ .
Էնոնց կուտամ գիշերներ որ ցորեկներն կը մոռցընեն :
Գաղտնի՛ սէրերուն ես թագաւորն եմ գաղտնի .
Սըրտե՛րը կը զուգեմ ու կը կոտրեմ կուռ շղթաներն ,
Ինչպէս թիթեռնիկն՝ իր թևերուն վրայ փոշեցան՝
Յուզուած դալարիքին կը տանի հոյլ հոյլ ծաղիկներ ,
Եւ սէրեր կուտայ անոնց անարտասուք եւ անվըտանգ :
Ես առի Արարչէն իր արարածը տրկար ,
Հակառակ իր կամքին , բնութիւնը մեր մէջ բաժնեցինք .
Կը թողում որ՝ ան , հըպարտ՝ շառ ցորեկին աղմուկներէն ,
Արեգակի մը վառ փայլին ներքեւ ծածկէ աստղերն ոսկի .
Լուռ մըթութիւնն ունիմ ես , ու կը շնորհեմ աշխարհին՝
Իրիկուան հեշտութիւնն ու բարիքները խորհուրդին .
Կուգաս արդեօք , մէկ քանի հրեշտակներու հետ երկնաբնակ ,
Ըզմայլի՛լ գիշերներուս թաւալումին վրայ քաղցրասահ .
Անոնց գանձերը տեսա՞ր : Գիտե՞ս թէ ինչ հրաշալիքներ
Կ'ընկերանան աղջամղջին հրեշտակներուն հսկումին :

« Անմիջապէս՝ որ տժգոյն հորիզոնին վրայ ձօձալով ,
Արե՛ւը կարմըրած՝ դալարիքէն կը բաժնըւի ,
Անհամար ոգիներ՝ ըստուերներուն մէջ կը թըռչինք ,
Օդին մէջ թօթվելով մեր թանձրաթուխ մազերը .
Այն ատեն անուշաբոյր ցօղը մինչեւ առաւօտ
Կ'անձրեւէ նարընջենուոյն վրայ , լեւակին եւ ուրցին .
Բընութիւնն , ուշադիր իմ պետութեանս օրէնքներուն ,
Սիրողարար կ'ընդունի զիս , կ'ունկընդրէ զիս , կը շընչէ զիս .
Ես իր հոգին կ'ըլլամ նորէն , եւ տարրերուն խորունկէն
Հըպատակներըս կ'ոգեմ ծրագրերներուս համար անուշ .
Վարժուած կոչնական գիշերային խրախճանքիս ,
Ամէն մէկն երգելով կը պատրաստուի հոն գալու .
Դէպ ի երկինքն աստղավառ , իր թըռիչովը հըպարտ ,

Սոխակը պերճախօս կը խոյանայ է՛ն առաջ .
 Անոր հընչուն ձայնը՝ ծովուն ու ցամաքին ու երկընթին
 Կ'աւետէ ժամանու՛մը սիրական իմ պահուս ,
 Տըժգոյն ալիզենւոյն իմ մերձեցումըս կը գովէ ,
 Խոնաւ վարդենիին ալ վերքստին զայն կը պատմէ .
 Մուսետիկ ներդաշնակ , ամէն տեղ զիս կը հըռչակէ .
 Մութին բոլոր թըռչուններն բոց աչքերնին կը բանան .
 Փոսուռան կը շողայ , անոր ճակատն ադամանդէ
 Ծաղիկներուն մօտ կը կրկնէ Հաստատութեան հըրատներն ,
 Եւ կը մըրցի պայծառութեամբ՝ մէտէորին հետ , որ , տըժգոյն
 Արշալոյսի մը նըման , ջուրերուն վրայ կը յածի .
 Ճահիճներուն աստղը , որուն կապն իմ ձեռքովըս կը քակեմ ,
 Կ'իջնայ 'ւ օդին մէջ կը գըծէ երկայն ուղի մը լուսեղէն :

« Կոխտակով խըղճի խայթն եւ անոր ցնորքը տըխուր ,
 Երբոր կոյսն իր մօրկանն անկողինէն կը հեռանայ ,
 Այդ ջահերը բընական իր քայլերուն տակ կը վառին ,
 'Ի անոնց յատակ բոցն էնոր կ'առաջնորդէ անպատիր :
 Եթէ բերանը ծարաւնայ եւ էն գայ մօտ ջըրեզ'րքին ,
 Ժըժմա՛կ մը խորագոգ՝ իբրեւ բաժակ փընտըռել ,
 կը հառաչէ , կը պըղպըջայ ջուրն 'ւ էնոր մերկ ոտքերուն տակ
 կը նետէ կոնքն Աստղկան՝ ափունքին վրայ աւազուտ :
 Ոգիներ էնոր ցոյց կուտան բաներ հրաշալի ,
 Պուրակներու տակ որ լեցուն են վարդերու բուրումներով .
 կը նըշմարէ խոտին վըրայ ուր անոնք զինքը կը տանին ,
 Այն ծաղիկներն որոնց չընտը՛ր լոկ գիշերը կը բացուի ,
 Որոնց համար առտըւան արշալոյսն իսկ անգուժ է ,
 Եւ որոնց ծոցը համեստ ունի սէրեր էնոր նըման :
 Լըռութիւնն է էնոր ընկեր . ամէն բան խոր կը քընանայ .
 Ամփոփուած , մըթութիւնը խորհուրդի մը կ'ունկընդդէ .
 Մօտակայ մարգերէն ամբրոսիս կ'բերեն հովերն
 Անտառական անկողինն վրայ զոր ընտրած է տարփածուն .
 Ընդհուպ երկու մատաղ ձայներ կը մըմընջեն խօսքեր անուշ
 Որոնք խուլ պուրակներուն կ'ողեւորեն անգորբը :
 Կատարը թանձրը կընձնիին որուն տակ են ապաստանած ,
 Թըռչունն , արթնցած , տերեւներուն ներքեւ կ'երգէ :
 Եւ տաղն հեշտութեան կը սարսուացնէ օդը համակ ,
 Ծառերն երգով կը թըրթըռան , ու մացառները նուազներով .
 Եւ ափունքին վըրայ ջուրին որ հեծելով կը հոսի ,
 Գիշերական աղաւնին նուազկոտ վու՛լուն կ'արձակէ :

« Ահաւասի՛կ Չարագործին գործն , աչքերուդ պարզըւած .

Այդ իբրը չար ամբաստանուածը ցաւերու սփոփիչ մըն է ,
 Որ ըստրուկին վըրայ կուլայ եւ կ'ազատէ զայն տիրոջմէն ,
 Կը փըրկէ զայն՝ սիրոյ շնորհիւ՝ իր էութեան վըշտերէն ,
 Եւ ինքն իսկ , թաղուած՝ ցաւի մէջ զոր անոր չափ կը զգայ ,
 Քիչ մը հրապոյր կուտայ անոր եւ մոռացումը՝ երբեմն : »

Այս խօսքերն իմանալուն , մատաղատի հրեշտակունսն
 Երեք անգամ կարմրեցան պարմանեկան այտերը ,
 Եւ անմաքուր նայուածքի մ'դէմ երեք անգամ մաքառելով՝
 Ոսկի կոպերն ըսքողեցին էնոր աչքերն երկնակապոյտ :

Ե Ր Գ Ե Ր Ր Ո Ր Գ

Ա Ն Ա Ո Ւ Մ

Ոսկի'ց կուգաս, ո՛վ Ամօթի զգացում, ազնիւ վախ, ո՛վ խորհուրդ
 Որուն ծընունդը երկիրն իր մանկութեան պահուն տեսաւ .
 Ծաղիկ անոր հին օրերուն որ դեռ մեր մէջ կը բողբոջես ,
 Ո՛վ ըզգացում Ամօթի , վա՛րդ Արքայութեան , ո՛ւսկից կուգաս :
 Միայն դո՛ւն Անմեղութեան դեռ կըրնաս տեղը բըռնել ,
 Բայց Ծա՛ռն արգիլուած՝ ծընունդ տըւած է քեզի .
 Հըրապոյրդ Առ՛քինութեան հըրապոյրին հաւասար է .
 Սակայն նաեւ դէպ ի Չա՛րը դուն քայլն ես առաջին .
 Կը պըճնըրի քուկին կուրծքըդ հանդերձով մը պարկեշտ .
 Եւա , դեռ օճը չը տեսած , չունէր հանդերձ այդպիսի .
 Եւ եթէ քօղը մաքուր կը զարդարէ կերպարանքըդ ,
 Նորէն քօղ մըն է ան , եւ ոճիրն ալ իր քօղն ունի :
 Քեզ ամէն բան կը վըրդվէ , նայուածք մը կոպըդ կը խոցէ ,
 Բայց մանուկն ոչ մէկ բանէ կ'վախնայ ու լո՛յս կը փընտըռէ :

Այս նո՛ր ազգեցութեան տակ՝ կը թուլնար Ելոա .
 Արդէն ինչալ էր ըսկըսած , որովհետեւ կը կարմրէր :
 Աղջամղջին Ոգիին լուծին գրեթէ հընազանդ ,
 Կ'իջնէ , նորէն կը բարձրանայ , դարձեալ մութին մէջ կ'իջնէ :
 Այդպէս՝ կաքաւը երբեմըն կը թըռչի կը սաւառնի
 Կոտըրտած հասկերու վրայ , գորոնք քաղել կը բաղձայ
 Իրեն սպասող բոյնին համար . եթէ իր թռիչը խիզախէ ,
 Աչքն անկարող է զատուիլ անկից որ զինքը կը դիտէ
 Եւ անիկա պահապան չունն է որ , հըսկող խոթոռագէմ ,
 Շեշտ ու չողուն նայուածքով մը մի՛շտ իրեն կը հետեւի :

Ո՛վ սիրոյ վայրկեաններուն անճառելի խելացնորում .
 Սիրտը սրբտին կ' պատասխանէ ինչպէս այերը քընարին .
 Նըման մատաղ սիրահարի մը որ , թարգման պաշտելի ,
 Կը բացատրէ այն ցանկութիւնը զոր ինքն իսկ է ներշնչած ,
 Եւ ամօթխած վրդովումին դէմ օգնելով իր սիրունուոյն ,
 Էնոր գիւթուած տրկարութիւնն իր թեւերուն մէջ քաշելով ,
 Յոյսով համակ գինովցած , աւելի քան կէս յաղթական ,
 Կ'արտասանէ երգումներն զոր էն կ'ընէ իր սրտին մէջ ,
 Ոգիներու վեհապետն , հեղձամղձուկ ձայնով մը ,
 Կը բացատրէր մըտածո՛ւմը վեհերոտ այն կոյսին :
 Առանց խօսելու , « Գո՛ւկդ եմ » կ'ըսէր Ելոա .
 Եւ հրեշտակը մըռայլ , ցած ձայնով « Ի՛մս եղիր » կ'ըսէր :

« Ի՛մս եղիր , իմ քո՛յրս եղիր . ես ալ քուկդ եմ , քուկդդ միայն .
 Եւ արժանի եմ քեզի . շատոնց ի վեր քեզ կը սիրեմ :
 Վասըն զի օր մը քեզ տեսայ : Չաւակներուն մէջ օղին՝
 Խառնըւած էի , սքողուած՝ ինչպէս արեւ մը ձըմնուտան :
 Նորէն տեսայ , լոկ մէկ անգամ , վերնադաւառն անպատում ,
 Կապուտակ հայրենիքը լուսեղէն տոններուն .
 Յաւ չըզգացի հեռացած ըլլալուս այդ վայրերէն
 Ուր երկիւղը կը տիրէ . Աստուածներուն մէջը միշտ .
 Դուն միայն ինձ երեւցար երիտասարդ աստղի մը պէս
 Որ , միս-մինակ , կը ճեղքէ անսահման քօղը զիշերին ,
 Դուն միայն ինձ երեւցար այն ինչ որ միշտ է ցանկացուած ,
 Ինչ որ մարդն ունենալ կ'ուզէ ստուերին մէջ իր կեանքին ,
 Այն Աստուածն որ միմիայն գիտէ խորհուրդն երջանկութեան ,
 Եւ թագուհին որու իմ գահըս մենաւոր կը սպասէ :
 Վերջապէս , ներկայութեամբդ , որ զիս մոգել յաջողեցաւ ,
 Յայտնութիւնն ունեցայ թէ ես կարող եմ սիրելու :

« Թեքեւս անոր համար որ աչքը , ըստուերոտած միշտ տրամութեամբ ,
 Ըսպասած էր իմ աչքիս որ կը փընտռէր զայն անդադար ,
 Կամ անոր համար որ քու ծագումը՝ քե՛զ չափ անուշ ,
 Քեզի տըւած է հայրենիք մ' ինձի մօտիկ աւելի ,
 Չեմ գիտեր , բայց այն ժամէն ի վեր որ ծնիլըդ տեսաւ ,
 Ամէն ստեղծուած էակի մէջ կարծեցի քե՛զ իսկ ճանչնալ .
 Լալով , տիեզերքին երեք անգամ չըջանն ըրի .
 Քեզ ամէն տեղ կը փընտռէի . մէկ շունչին մէջ այերին ,
 Ճառագայթի մը մէջ՝ լուսնի սկաւառակէն վար թափած ,
 Աստղին մէջ որ կը փախչի երկընքէն ուր կը նեղանայ ,
 Ծիածանին մէջ որմէ անցնիլ սովոր են հրեշտակներն ,
 Կամ անկողնին վըրայ կակուղ սառնարանի ձիւներուն .
 Ի զուր երկնի գունտերուն ես հարցումներ կ'ուղղէի .

Մըթընցուցի սըռնակներն հրեղէն կառքին ասողերուն .
 Անոնց շողերն ըսքողեցի՝ որպէս զի աչքըդ հոն գրաւեմ ,
 Նոր ցնորանքէս յանդգնացած , ես ժրտեցայ մինչեւ անգամ
 Երկնաւոր քընարին զըպչիլ ոսկի թելերուն :
 Բայց դուն ոչինչ լըսեցիր , բայց դուն երբեք զիս չըտեսար .
 Երկրի վըրայ դարձայ նորէն , եւ իմ քայլերս սահեցուցի
 Մարդկային երգիքներուն տակ ուր ծընունդ առիր դուն .
 Կը կարծէի քեզ հոն գըտնել՝ անմեղութիւնը պաշտպանող ,
 Գընացած երախայի մը ճօճացող օրրանին վրայ ,
 Զովացնելով անոր շըթունքը բարեկամ շունչով մը ,
 Եւ կամ թեւերդ ընդլայնած՝ վարագոյրի մը նըման ,
 Երկչոտ պարեկապան , ջանալով զե՛րժ պահել ինձմէ՝
 Գունը կո՛յս աղջըկան՝ պառկած քովիկն իր քըրոջ .
 Որ զէն կուրծքին վըրայ երազի մէջ քաղցրօրէն կը սեղմէ :
 Բայց միայնակ կը դառնայի իմ բնակարանըս գեղեցիկ .
 Լացի հոն ինչպէս այստեղ , ու հեծեցի՝ մինչեւ այն ժամն
 Ուր հընչիւնը թըռիչիդ զիս թունդ հանեց ու դողացուց ,
 Զերդ քահանայ մ՛ որ կը զգայ թէ՛ պիտի խօսի իր Աստուածը : »

Այսպէս կ'ըսէր . եւ ընդհուպ , ինչպէս զըշխոյ մը նորատի
 Որ վեհապետ կոչուելէն բեկրապատար կը կարմըրի
 Եւ իր հըլու հպատակներուն չնորհալի ժեսթ մը կ'ուղղէ
 Կամ անոնց խանդոտ սիրոյն կուտայ նայուածք մ'իւր աչքերուն ,
 Ելոա , իր գըլուխը ծածկող քօղն առնելով վեր ,
 Անուշ ժըպիտով մ'անոր խօսիլ կը պատրաստուի ,
 Աւելի մօտ կ'իջնէ անոր , ու կը ծըռի , եւ կաթոգին
 Իր անմահ սիրականն հըպարտութեամբ կը դիտէ :
 Իր կուրծքն աղւոր , ինչպէս ալիք մ'որ ափունքին վըրայ կը մարի ,
 Առջի անգամ ըլլալով՝ կ'ուռնայ ու կը հառաչէ .
 Իր բազուկն , ինչպէս ճերմակ շուշան՝ լըծին վըրայ կախուած ,
 Երկիւղով կը մօտենայ՝ դանդաղօրէն տարածուած .
 Իր բերանն անուշահոտ՝ բացուած ատեն՝ կարծես կ'ծաղկի ,
 Ինչպէս վարդը մատղաշ՝ արշալոյսին չնորհներուն տակ ,
 Երբ առաւօտն անոր վըրայ կը հոսեցնէ հեղուկ մը զով
 Եւ ճաճանչ մ'օրուան լոյսին անոր մինչեւ սիրտը կ'իջնէ .
 Կը խօսի՛ , եւ էնոր ձայնը հընչիւնի մը մէջ աղւոր
 Կը միացնէ ինչ որ հրապոյր ունին բոլոր ձայներն անուշ ,
 Գընարն , անտառներուն մէջ՝ սըրինգին ներդաշնակուած ,
 Եւ թըռչունն որ կուլայ իր եղերերգն առաջին ,
 Ու ծովն , երբ ափունքին մօտ կը բերեն իր ալիքներն՝
 Երազող ուղեւորին ոտքը՝ երգերն իրիկուան ,
 Եւ հովն , որ գիւղերու զանգակներուն հետ կը խաղայ
 Կամ ջուրերու փախուստովը կընիւններն կը հեծեցնէ :

“ Բանի որ դուն զեղեցիկ ես , բարի ես դուն անտարակոյս .
 Որովհետեւ երբ հոգի մը կ'ուզըրէ գէպ ի Երկինք ,
 Հոն մըանելու պահուն՝ կ'սեսնենք որ , սրբազան զգեստի մը պէս ,
 Բարութիւնն անոր կուտայ զեղեցկութիւնն յաւերժական :
 Բայց ինչո՞ւ քուկին խօսքերդ ինծի երկիւզ կը ներշնչեն .
 Ինչո՞ւ համար ա՛յդքան ցաւեր ճակտիդ վըրայ են դըրոյմուած .
 Դուն ի՞նչպէս կարողացար սրբավայրէն իջնել վար ,
 Եւ ի՞նչպէս կը սիրես զիս , եթէ Աստուած չես սիրեր : »

Նայուածքներու վըրդովունն , անճառ շընոր՝ պարկեշտութեան ,
 Անմեղութեան չափ հըզօր այս բառերուն կ'ընկերանար .
 Էնոր բերնէն կ'իյնային անոնք , այնքան քաղցր ու մաքուր
 Որքան ձիւնը ձըմեռուան՝ բըլուրներուն վըրայ մութ :

Եւ ըստ որում , համակ սընած՝ ըսկըզբնական խկութեամբ ,
 Հրեշտակները սըրտերնուն մէջ աղբիւրներ ունին լոյսի ,
 Մինչդեռ էն կը խօսէր , իր թեւերն ու իր կուրծքը
 Եւ բազուկները չորս կողմ ցորեկուան պէս լոյս սըփոսեցին .
 Այդպէս աղամանդը կը շողայ խաւարին մէջ .
 Հրեշտակապետը կը սոսկայ եւ իր մըռայլ մագերուն տակ
 Իր շըլացած աչուրներուն թանձր ապաստան մը կը փընտոէ .
 Կը խորհի որ կատարածն երբոր համի ժամանակին ,
 Պարտաւորուի պիտի նոյնպէս նայիլ երեսն իր Տիրոջ ,
 Եւ մէկ հայեացքն Աստուծոյ զինքը փըշըէ պիտի թերեւս .
 Կը յիշէ նաեւ բոլոր այն տառապանքը զոր կըրեց
 Ջանալէ յետոյ Յիսուան անապատին մէջ փորձել .
 Կը շողայ . եւ իր սըրտին վըրայ ուր դըժոխքը կը սկսի ,
 Վերարկուի մը պէս մութ՝ նետելով իր թեւն անսահման ,
 Կ'ուզէ փախչիլ : Սարսափն անոր բոլոր ցաւերն էր զարթուցած :

Լեռներու ձիւնին վըրայ որ աւաններն կը պըսակէ ,
 Սպանիացին վիբաւորած է Աստուրեանց արժիւր ,
 Որուն թըռիչը կը սպառնար իր ըսպիտակ հօտերուն .
 Փետրացից , կը փախչի թըռչունն արիւն անձրեւելով ,
 Այնքան արագ կ'ելլէ երկինք որքան փայլակն անկից կ'իջնէ ,
 Կը նայի՝ իր արեւուն , կըտուցը բաց՝ կը ծըծէ զայն ,
 Կը կարծէ կեանք վերըտանալ լուսաբորբոք պետութենէն ,
 Հեղանիւթի մը մէջ ոսկի հըզօրապէս կը լողայ ,
 Եւ վայրկեան մը կ'օրօրուի ճաճանչներուն մէջտեղը .
 Բայց մարդը չա՛տ ապահով հարուած մը տուած է անոր ,
 Կը զգայ կապարն որսորդին որ իր վէրքին մէջ կը հալի .
 Փետրաթափ կ'ըլլան թեւերն , եւ իր լօղիկն արքայական

Կը թրոջի , աղուամաղի պէս՝ դանակով փրցցուած .
 Օգէն իրաւագուրկ , իր ծանրութիւնը զինքը վար
 Կը գըլորէ , ու զողալով լիերան ձիւնին մէջ կ'ընկըղմի ,
 Եւ սառոյցն երկրաւոր ծանրակըշիւ քունի մը մէջ
 Կը փակէ այդ աչքն ու ժեղ՝ արեգակէն յարգըւած :

Այդպէս ալ , խո՛րն իր մըտքին վերջիչելով իր ցաւերն ,
 Անիծուած հրեշտակն իր մութ մագերը վար կախեց ,
 Կը համակուած գըծոխային վըշտով մ' , ըսաւ ինքիբեն .
 « Բառնաարխո՛ւր սէր մեղքին , չարին մըտա՛յլ ցանկութիւն ,
 Հըպարտութեան , գիտութեան հըսկայակա՛ն մըտածումներ ,
 Ի՞նչպէս եղաւ որ ձեր անմիտ բորբոքումները ճանչցայ .
 Անիծուա՛ծ ըլլայ վայրկեանն ուր Աստուծոյ հետ չափուեցայ .
 Ո՛վ սըրտի պարզութիւն , սրմէ ընդ միշտ բաժնըւեցայ ,
 Կը դողամ քու առջեւ , եւ սակայն քեզ կը պաշտեմ .
 Ես նըւազ ոճրագործ եմ , քանի որ քեզ կը սիրեմ դեռ .
 Բայց պղծուած սըրտիս մէջ դո՛ւն այլ եւս երբեք պիտի չդառնաս ,
 Անցեալին մէջ եղածէս հեռու , ա՛յնքան քայլեր առի ,
 Եւ ա՛յնքան անսահման է անջրպետն ինձմէ՛ ինծի ,
 Որ ինչ որ ինձ անմեղութիւնը կ'ըսէ՝ ա՛լ չեմ հասկընար .
 Կը տառապիմ , եւ իմ միտքս , ընդ միշտ չարէն ըզգետնըւած ,
 Մինչև այդքան մաքրութիւն ա՛լ չի կրնար բարձրանալ :

~~~~~

“ Ի՞նչ եղաք դուք , ո՛վ երկնային օրեր , օրե՛ր խաղաղութեան ,  
 Երբ կ'երթայի , ես՝ առաջինը համեստ այդ հրեշտակներուն ,  
 Ծընրազիր աղօթել հին օրէնքին առջեւ ,  
 Եւ հաւատքէն անդին ոչ մէկ բանի չէի մըտածեր .  
 Յաւերթութիւնն ինծի համար ինչպէս հանդէս մը կը բացուէր .  
 Կը ժըպտէի . . . ու թերեւս . . . պիտի թերեւըս սիրէի . . . »  
 Այսպէս ի՛նքն իսկ փորձիչն հըրապուրուած էր զըրեթէ .  
 Իր արուեստն էր մոռցեր եւ զո՛նն ալ զոր կ'ուզէր ցանցել .  
 Եւ իր սիրտը վայրկեան մը ոճիրէն հանգչեցաւ .  
 Ու ցած ձայնով կը կըրկնէր , ճակատն առած ձեռքերուն մէջ ,  
 « Ա՛խ , եթէ գէթ կարենայի՛ մարդոց նըման արտասուել . . . » :

~~~~~

Եթէ կոյսն այդ վայրկեանին կարենար զինքն իմանալ ,
 Եթէ իր ձեռքն երկնային , յանդգնելով անոր մօտիլ ,
 Զայն բըռնէր՝ զըզջաւոր , նորէն երկինք կ'ըլլել ուզող ,
 Ո՛վ գիտէ , թերեւըս չարն ա՛լ դոյութիւն չէր ունենար .
 Բայց իսկոյն որ տեսաւ , իր մըտախոհ գըլխուն վերեւ ,
 Քողաթափ գըծոխքին ջըղաձգական մորմօրը ,
 Զարմացած ու զողոթուն , աչքերը վեր բարձրացուց .
 Քիչ մ'աւելի ուժ գըտած , կարծես երկինքը յիշեց ,

Եւ իր թեւերն արծաթափայլ երկու անգամ վեր վերցուց ,
 Ու հեծեց , իր մոգուած շրթները կէս բանալով ,
 Ինչպէս մանուկ մը նորատի , եղէգներուն կառչելով ,
 Տրկար ճիչեր կը փորձէ որ ջուրերուն տակ կը խեղդուին :
 Նա տեսաւ որ էն պատրաստ էր դէպ երկինքը փախչիլ .
 Ինչպէս վազր մ'արթնցած՝ փոշներուն մէջ կը ցատքէ ,
 Անմիջապէս ինքն իր մէջ , ու հզօրագոյն քան երբեք ,
 Վերգտնելով այն ոգին որ ընաւ երբեք չի կըքեր ,
 Չարի սե'ւ ոգին զոր տե'սքն անմեղութեան կը զայրացնէ ,
 Կը չիկնի իր ուժէն տարակուսած ըլլալուն ,
 Խաղաղութեամբ կը համակէ նորէն ճակատը պայծառ ,
 Յանկարծ կըրկին կը վառէ յանդրգնութիւնն իր աչքերուն ,
 Եւ ընդ երկար , լռութեամբ , հիացարար կը զիտէ
 Երկընքէն իջած զոն , զոր կ'վիճակէ իր տաճարին .
 Կարծես էնոր ցոյց տալու համար թէ զո'ւր կ'ընդդիմանայ ,
 Եւ ինքն իսկ կարծրանալու համար՝ այդ սուրբ նայուածքով :
 Առանց սիրոյ եւ առա'նց խղճի խայթի , սառ սըրտին մէջ
 Իր տալիք հարուածներուն ի'նչ տեղ ուղղիլը կը խորհի .
 Ու նըման ռազմիկին որ անվրդով ձեւանալով ,
 Զըրահին ձեղքերուն մէջէն կ'ջանայ կուրծքն հարուածել ,
 Իր դէմքին կուտայ տեսիլ մ'էնոր տեսչին համաձայն .
 Կերպարանք , ձայն , ժեսթ , կեցուածք , իր մէջ ամէն բան կը փոխուի .
 Արցունքներ կեղծուպատիր , որ իր սըրտէն չեն բըղխիր ,
 Յանկա'րծ կ'երեւան իր աչքերուն եզերքը .
 Ելոա որ երկընքին մէջ արտասուք չէր տեսած ,
 Կանգ կ'առնէ , հառաչ մ'էնոր վըրդովումներն կը սաստկացնէ .
 Ան կուլայ դառնօրէն , աքսորական մարդու մը պէս ,
 Այրիի մը նըման՝ իր մորթըւած որդւոյն մօտ .
 Իր մազերը , քակուած , կը թափթըփին . ու չեն կասիր
 Հեծկըլտանքները կուրծքին որ իր գըլուխը կը թօթվին ,
 Ելոա ինքն ալ կուլայ , եւ իրարու կ'խօսին սապէս .

“ Ի՞նչ բրի քեզ . ի՞նչ ունիս , ահաւասիկ հո'ս եմ ես :
 — Դուն կ'ուզես փախչիլ ինձմէ , եւ թերեւս ալ մըշտապէ'ս :
 Զիս ի՞նչքան կը պատժես՝ քեզ զիս յայտնած ըլլալուն :
 — Նախընտրէի պիտի մընալ , բայց Աստուած ի'նձ կը սպասէ .
 Քեզի համար պիտի խօսի'մ իրեն . յաճախ կը լըսէ մեզ :
 — Ան ինձ ոչինչ կըրնայ ընել . իմ բաղդս երբեք չի փոխուիր .
 Դուն ես հրեշտակ մը փրկելու կարող աստուածը միակ :
 — Ի՞նչ կըրնամ ընել : Աւա'ղ . ըսէ' , պէ'տք է որ մընամ :
 — Այո' , իջի'ր մինչեւ ինձի , զի չեմ կըրնար ես բարձրանալ :
 — Բայց ի՞նչ կ'ուզես ինձմէ : — Եկո'ւր . է'ն աղւոր նուէրն անձը տալն է :
 — Աքսորուի'մ Երկընքէն : — Ի՞նչ փոյթ , եթէ զիս կը սիրես :
 Զեռքս բըռնէ' : Քիչ յետոյ , մեզ համար չարն ու բարին
 Հաւասար քամահրանքի մը մէջ իրար պիտի շփոթուին :

Դուն երբեք հասկըցա՛ծ չես թէ ո՛րքան անուշ է
 Իր կու՛ծքն ընծայել՝ որ արցունքներ ծածկեն այնտեղ :
 Եկո՛ւր . կա՛յ երջանկութիւն մը զոր ես քեզ պիտի յայտնեմ .
 Դուն հողիդ ինծի բա՛ց , եւ ես զայն հո՛ն պիտի հոսեմ :
 Ինչպէս արչալոյսն ու մայր մըտնող լուսնակը
 Իրենց շողերն իրարու կը խառնեն , եւ ինչպէս ցօղն
 Իր երկու արցունքը մէկ մարգըրտի մէջ կը միացնէ՝
 Տողորուելու համար բուրմամբը ծաղկներէն արտաչընչուած ,
 Կրկին ջահի մը նըման այդ երկու բոցը կը զուգէ ,
 Ոչ նըւազ սերտօրէն մեր հողիներն պիտի զուգենք :
 — Կը սիրե՛մ քեզ , 'ւ ահա կ'իջնեմ : Բայց Երկինքն ի՞նչ պիտի ըսէ :

Այդ միջոցին , օդին մէջէն , անցաւ , հեռու իրենց աչքէն ,
 Երկնաւոր դասերէն մին , եւ օրհնարան երգերուն մէջ ,
 Սա խօսքերը լըսուեցան զոր հրեշտակներն կը կրկնէին .
 « Տիեզերքին մէջ բովանդակ , յաւերժապէս փա՛ռք անոր
 Որ ուրիշին փրկութեան համար իր անձը կը զոհէ : »
 Կարծես Երկինքը կը խօսէր : Ա՛լ զինսթափ էր Ելոս :

Երկու անգամ դարձեալ վեր առնելով աչքը դրուժան ,
 Պրտրտցնելով նայուածքներ՝ անվճռական տակաւին ,
 Էն փրնարուեց իր երկինքը զոր այլ եւրս չէր տեսներ :

Հրեշտակներ կ'երթային քառսէն դուրս աշխարհներ
 Հանելու : Մինչդեռ անոր խոր դաշտերէն զարհուրագին
 Կ'անցնէին՝ կատարելով հրամաններն Աստուծոյ ,
 Ամպ մը հրեղէն տեսան ամենքն ալ որ կ'իյնար գահավէժ ,
 Եւ ողբեր ցաւագին , պատասխաններ անողորմ՝
 Բոցին մէջ՝ թեւերու բարախուժին կը խառնուէին :

“ Աղւո՛ր հրեշտակ , ո՛ւր կը տանիս զիս : — Եկո՛ւր , հե՛տքս եկուր :
 — Ի՞նչպէս արխուր է քու ձայնդ , եւ ո՛րքան մութ են խօսքերդ :
 Ելոսն չէ՞ որ շրջթաղ վեր կը վերցնէ : Կարծեցի քեզ
 Փրկած ըլլալ : — Ո՛չ , ես եմ որ քեզ կը քաշեմ կը տանիմ :
 — Եթէ մենք միացած ենք , ի՞նչ փոյթ թէ ո՛ւր ալ ըլլայ :
 Զիս նորէն ուրեմն քո՛յրըզ կամ աստուածդ անուանէ՛ :
 — Ըստրո՛ւկս է որ կը տանիմ , եւ զոնս է որ ձեռքս ունիմ :
 — Ս՛յնքան բարի կ'երեւայիր : Օ՛հ , ի՞նչ ըրի : — Ոճի՛ր մը :
 — Գէթ աւելի երջանիկ պիտի ըլլա՞ս . գո՞հ ես գոնէ :
 — Աւելի տխո՛ւր քան երբեք : — Բայց ո՞վ ես գուն : — Սատա՛նը :


Թարգմ. Ա. Գ.

ԱԼՖՐԵՏ ՏԸ ՎԻՆԵԻ



ՄԱՇՏՈՅ ՎԱՐԴԱՊԵՏ

Գտիչ այբուբենի, քարգմանիչ,
աւեսարանող եւ մատենագիր



(Շար.)

այ այբուբենի վերջնական լրակատար յօրինումը կատարելուն պէս՝ Մաշտոց իսկոյն կը ձեռնարկէ իր երկար-ժամանակեայ ըզձանքին գործադրութեան, կը նստի թարգմանելու Ս. Գիրքը իր երկու աշակերտներուն՝ Եկեղ-

եաց գաւառէն Յովհանի ու Պաղնացի Յովսէփի հետ, իր նորակազմ այբուբենի նախափորձը ընելով Առակաց Գրքին թարգմանութեան վրայ : Յաջողութեամբ գլուխ կը հանէ զայն, եւ Սամուսացի Հռուփանոս ճարտար արուեստագէտին ձեռքով կանոնաւոր մաքուր գրչութեամբ գրել տալէ յետոյ՝ եւ պատանիներ այդ գրչութեան վարժեցնելէ յետոյ՝ խանդով եւ « հոգելից ուրախութեամբ » լցուած ճանբայ կ'ելլէ դառնալու Հայաստան եւ իր մեծագին գանձը ներկայացնելու թագաւորին եւ կաթողիկոսին :

Մաշտոց իր առաքելական գործին դժուարութիւնները պարզող բանալին ա'լ գտած էր : Հայաստան պիտի վայելէր այնուհետեւ ուրիշ քրիստոնեայ երկիրներու նման, « հայերէն լսողութեամբ » իր սուրբ գիրքը : Ա'լ այդ ընտանի բարբառով պիտի հնչէին Հայաստան աշխարհի բոլոր վանօրայք եւ բոլոր եկեղեցիները : Հայ մանկտին՝ ասորի տանջանքէն ազատած՝ իբր խաւարէն դուրս ելած՝ ուրախութեամբ ու փափաքանօք պիտի վազէին հայերէն ուսուցումով զպրօցները : Յափշտակիչ հեռանկար մը արգա-

րու որ այնքան անձկալից ճիգերու լարումէն ետքը բերկրանքներու գերագոյնը կը բերէր Մաշտոցի սրտին : Իսկ մեծ գիւտին վրայ ազգին հիացումը ու ոգևորութիւնը կարելի է չափել Կորիւնի խանդավառ գնահատումէն որով Մաշտոցի դարձը կը նմանցընէ Սինայի լեռնէն Մովսէսի էջքին՝ հետը բերած տէրունի պատուիրաններու տախտակը : Նմանութիւնը յանդուգն ըլլայ թէ ոչ, Մաշտոցի դարձը եւ եղած ընդունելութիւնը կը հաւասարէր հայրենիքի ազատիչ մեծ զօրապետի մը յաղթական մուտքին ու շուայուած պատիւներուն : Թագաւորը, կաթողիկոսը, նախարարներու աւագանին բազմութեամբ քաղքէն ելլելով փութացին ընդանալի եւ ցնծալից ոգևորութեամբ ողջունել մեծ գտիչը Ռահ գետին քով որու անունը կը յիշեցնէ Աւեստական համանուն Ռահ գետը, նշանաւոր իբր առաջին հանդիպման վայր Զրադաշտի ու Վշտասպ թագաւորի :

Կ'երեւի թէ թագաւորին մամնաւոր մտահոգութեան առարկայ եղած էին Ե' արաց գաւառին խուժագուժ կողմերը թէ՛ իրենց հեթանոսական կոպիտ բարքերուն եւ թէ՛ իրենց կոշտ ու խնցրեկ լեզուին համար որ զիրենք դժուարամտ չելի կ'ընէր : Առաջին անգամ ասոնց ուղղել հրաման ըրաւ Մաշտոցի իր առաքելական ջանքերը : Այս գործը յաջողութեամբ կատարուելէ յետոյ, վերստին ձեռք կ'առնուի թարգմանելու գրել, միեւնոյն ժամանակ շարունակելով աւետարանչական գործը, եւ մանաւանդ ուշագրութիւն կը դարձուի Հայաստանի գաւառներու մէջ տեղ տեղ աշակերտներու խումբեր գումարել ուսուցանելու նորագիւտ այբուբենքով եւ հայերէն սուրբ գրքով, եւ քարոզիչներ պատրաստելու անոնցմէ :

Մաշտոց եւ Սահակ իրենց մօտ կեցող արքունի բանակին ազատտոհմիկ անդամներուն քարոզութիւններ կ'ընեն, եւ Սահակ կաթողիկոսին յատուկ խնամքին ու հոյաժողութեան առարկայ կ'ըլլայ իր ազգական Մամիկոնեան տոհմին անդամներուն կրօնական ուսուցումը, որոնց առաջինին անունն էր, կ'ըսէ Կորիւն, վարդան որ վարդկան ալ կը կոչուէր, այսպէս պատահաբար մէջ բերելով անունը մեծ քրիստոնեայ զինուորականին որ իր մէջ սերմանուած քրիստոնէութեան սկզբունքները այնքան

լաւ պիտի աճեցնէր եւ այնքան լիով պիտի պտղաբերէր յետոյ՝ Զրադաշտական կրօնի ընդդիմադրութեան մէջ Հայ եկեղեցականութեան պատրաստակամ եւ անձնանուէր գործիքն հանդիսանալով :

Այս ժամանակիս , կ'աւելցրնէ պատմիչը՝ գեղեցիկ այլարանութեամբ մը , Հայոց երանելի եւ ցանկալի աշխարհը անպայման սքանչելի կը լինէր , զի ամբողջ Ս. Գրքի ի հայ թարգմանութեան շնորհիւ , մեծ օրինատուն Մովսէս՝ բոլոր մարգարէներով , եւ Պօղոս՝ բովանդակ առաքեալներուն հետ՝ Քրիստոսի կեցուցիչ աւետարանովը , մի'անգամայն կարծես Հայաստան եկած հասած՝ հայաբարբառ եւ հայերէնախօս կ'երևէին :

Ժամանակակից պատմիչը՝ իր ժամանակի ոգիին բերմամբ՝ քրիստոնէական վերածնութեան , քրիստոնէական ուսումի տարածման օգուտներն է միայն որ կը նկատէ հայ դպրութեան գիւտին մէջ . բայց դարերու հեռավորութենէն եւ յետագայ դէպքերու գիտութեամբ հիմա դիւրին է տեսնել յստակօրէն թէ մէկէ աւելի մեծակշիռ հետեւանք ունեցաւ ան , եւ թէ ամէն հանգամանքներով Հայոց պատմական ճակատագրին վճռական ուղղութիւն տուաւ :

1. Քրիստոնէութիւնը հայ լեզուով աւանդելով անաշխատ կրցաւ ժողովրդին պիտակցութեան խորը տպաւորուիլ եւ իւրացուցուիլ , եւ քրիստոնէութեան իտէալը այնքան ժողովրդական եւ ցանկալի դարձաւ որ անոր սիրուն՝ ազգին ամենամեծ մասին զիւր պիտի գար յետոյ կեանքը տալ : Քրիստոնէութեան իտէալի ցանկութեամբ բռնուած այս ազգն էր որ դարերով այնքան ծայրայեղ փարոււմ մը ունեցաւ իր եկեղեցիին ու այնքան խոր ընկղմեցաւ անոր մէջ որ « տիրացու ազգ » յորջորջանքն ստացաւ հարեւանցի դիտողներէ :

Եղիշէի վկայութիւնն ունինք ժողովուրդին համար առհասարակ թէ « Սաղմոսներն էին անոնց երգի մրմունջները , եւ սուրբ գրքի ընթերցումը՝ կատարեալ ուրախութիւն : Ամէն մարդ իր անձին մէջ եկեղեցի էր , եւ նոյն ինքը՝ քահանայ » : Ս. Ղեւոնդ պարզ զօրականներու իր ոգեւորիչ , սքանչելի յորդորականը խօսած ատեն չվարանիր ըսելու « ինչ աւելի տեղեակ եւ հմուտ էք սուրբ կտակարաններուն » : Ահա-

զին եւ նշանակալից փոփոխութիւն , արդիւնք 40 տարուան կրօնական ուսուցման հայ դպրութեամբ որով հելլեն ու ասորի լեզուն դիտողներուն մենաշնորհը եղած քրիստոնէութեան ուսումը ամբողջ ժողովրդին սեփականութիւն դարձած էր : Ամբողջ երկիրը իրապէս կատարելապէս քրիստոնէացած էր , բան մը զոր չէր կըրցած իրագործել Մեծն Ներսէսի պէս բարեկարգիչ մը՝ իր զօրեղ նկարագիրովը եւ թագաւորական տոհմին ազգակցութեան ազգեցութեամբն իսկ : Մեծ էր գործիչը , բայց դանուած չէր դեռ գործիքը , հայ դպրութիւնը : Քրիստոնէական կրօնի իտէալին այս իւրացումը , եւ եռանդագին փարոււմն էր որ մեծ , ամուր , անկործանելի պատ մը հիւսեց հայ ազգին եւ դրացի , ընտելակից , համաբարոյ , համասեր Արիական մեծ ազգին Պարսից մէջ , եւ անգործապրելի ըրաւ Սասանեանց ծրագիրը եւ Վասակի խորհուրդը՝ Զրադաշտականութիւնը Հայաստանի մէջ վերահաստատելով՝ Արեւաց մեծ ուժին թեւարկութեան տակ եւ անոր քաղաքականութեան սպասարկու երկիր մ'ընելու ան :

Մաշտոցի այբուբենքն էր որ Հայաստանի մէջ առ յաւելտ մեռուց անմահ դիքը՝ արի Արամաղղը , Ոսկեմայր մեծ Անահիտը , ահուրաները^(*) , Տէր-Անդաց Միհրը (Տէրբնտա) , որոնք դեռ բոլորովին կորսնցուցած չէին իրենց ընտելականութիւնը ազգին , ինչպէս յայտնի է Խոսրովի օրով (իր 330) թագուհիին համախոհութեամբ հեթանոսութեան վերահաստատման հետամուտ կուսակցութեան մը գոյութենէն եւ գործունէութենէն :

2. Աներկբայելի է թէ մտաւորական լուսաւորութիւնը , շարժումը որ ծնաւ հայ դպրութեան գիւտով , եւ ասորի , յոյն գրքերու թարգմանութեամբ ու անոնց միջոցով՝ այդ զարգացեալ ազգերու գաղափարներուն եւ մտածումներ-


(*) Ահուրա=Զօրութիւն , փոխաբերաբար Ոգի , երկնային ոգի , ահուրայք=երկնային զօրութիւնք , տակալին անհետ չեն հայ լեզուէն : Ազգամանգեղոսի մէջ (Վենետիկ) էջ 101 կը կարդանք Վիրապին մէջ ձգուած Գրիգորին համար թէ այրի մը օրը նկանակ մը կը ձգէր հոն « հրաման առեալ յարհուրայց » ըսել ուզելով՝ զրդուած վերին զօրութիւններէ : Դժբաղդաբար Ազգամանգեղոսի հրատարակիչները յաւիարացի ուղղած են , արհաւիրքին մեծը իրենք գործելով այս սրբագրութեամբ :

րուն տարածումովը Հայոց մէջ, ազգին գիտակցութիւնը սաստկացուց, անոնց նմանողութեամբ գրականութիւն, պատմութիւն ունենալու, իր անցեալը գիտնալու, իր մեծութիւնը, իր տկարութիւնները ճանչնալու, ինքզինքը արտայայտելու եռանդ ներշնչեց: Մեկ խօսքով ազգը եղաւ «ինքնագէտ»: Գարագաշեանի բառով, հետեւաբար բարոյապէս շատ աւելի հզօր, քան իր նիւթական ուժի համեմատաբար անգիտակից օրերուն: Նշանակելի իրողութիւն է թէ հայ այբուբենքի գիւտէն առաջ հայ դպրութիւն, հայ մտքի արագորութիւն գիր առնուած՝ օտար լեզուով կամ այբուբենքով՝ գայութիւն չունի: Յոյն լեզուով գրուած կարծուած երկու երեք գրութիւններու համար վերջնականապէս ապացուցուած է թէ հայ այբուբենքէ անմիջապէս կամ քիչ ետքի խմբագրութիւններ են: Հայ այբուբենքով է ուրեմն որ հայ մտքին արտայայտութեան «կապերն արձակուեցան բացուեցան»: »

3. Վրամշապուհի օրով Հայաստան քաղաքական անկումի, փճացման բոլոր նշանները ցոյց կուտար: Դրացի երկու հզօր հակառակորդ պետութեանց մէջ մրցանակ ու մրցավայր դարձած, մէկին կամ միւսին հետ իր բազմը մշտապէս չկապող՝ հետեւաբար երկուքին ալ հաւասարապէս առելի եղող Հայաստանը վերջապէս երկուքին մէջ բաժնուած էր, եւ կը կառավարուէր տկար ծառայ-թագաւորիկներու միջոցաւ, որոնք նոյն իսկ իրենց նախարարներուն չէին կրնար ազդել պատշաճ յարգանք: Թագաւորը, զուրկ ազդեցութենէ, զուրկ զօրութենէ որ միութիւն կը կռէ, խաղալիկ դարձած էր օտար արքունիքի եւ յոխորտ բմբոստ նախարարներու մէջ դարձած ոլորակներուն: Երկիրը իր մէջ ուրիշ միաւորող ուժերէ ալ զուրկ էր: Գիտունք կորիւնէ թէ Գողթն, Սիւնիք եւ Մարք գաւառները հին հեթանոսական բարքերը կը պահէին, եւ վերջինը իր լեզուով ալ դժուարամատչելի էր: Լեզուական տարբերութիւնները — անշուշտ ոչ նոյն աստիճանի — կը գատէին նաեւ վերին Հայաստանը ու Ստորին Հայաստանը (Մոփք, Անգեղտուն, Անձիտ), բաժանում որ երեւան կուգայ Եղիշէի Դ. յեղանակ Թ.ի եւ Բիւզ. Դ. գիրք ԻԳ.ի մէջ ակնարկութիւններէ, եւ Եզնիկի Ստորին Հայաստանի բնակիչներուն

տուած «Ստորնեայք» յորջորջումէն, եւ որ համաձայն կ'ընթանայ Ստրաբոնի՝ աւանդածին Արտաշատի (Երասխի հովտին) եւ Մօփքի նախկին երկու հայ թագաւորութեանց գոյութեան եւ Մեծն Տիգրանի ձեռքով բռնաբար միացման մասին: Հայ դպրութեան միջոցաւ Գրիստոնէութեան ժողովրդականացման մեծ շարժումը ճիշդ ժամանակին հասաւ միութեան հզօր ուժ մը բերելու եւ կասեցնելու վերահաս կորուստը: Կարելի է ուրեմն Մաշտոցի գործունէութեան արդիւնքը Հայաստանի մէջ որակել նոյն բառերով զոր կը գործածէ կորիւն՝ անոր վրաց մէջ յառաջ բերածին նկատմամբ: «Եւ արդ զնոսա որ յայնչափ 'ի մասնաւոր եւ 'ի բաժանեալ լեզուաց ժողովեցան, միով աստուածաբարբառ պատգամօքն մի ազգ կապեալ, փառաբանիչք միոյ աստուծոյ յօրինէր»: Ա՛լ այնուհետեւ ի զուր պիտի փորձէր Սիւնեաց իշխան մը՝ Վահան (570ին) Սիւնիքը Հայաստանի կապող կապը խզել բոլորովին եւ անջատուիլ, խնդրելով Պարսից թագաւորէն որ Դիւանը Դուինէն ուրիշ քաղաք փոխադրուի, վարչականօրէն Ստրպատականի միանայ, եւ ա՛լ Հայ անունով չկոչուին: Ժողովուրդը չկրցաւ իր ետեւէն տանիլ այս անջատումի փորձին մէջ, եւ Սիւնիք մնացին այնքան հայ որքան Հայաստանի միւս գաւառները: Միութիւնը անխզելի դարձած էր: Մաշտոցի այբուբենքը եւ քարոզութիւնը իրենց գործը կատարած էին:

(Շարունակելի) Գ. ՓԱՌՆԱԿ



ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ֆարմանի Ասմանի

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ե Ց

Ֆրեսերիք ՄԱՔԼԷԻ

Խնդրեցիև ի քաղաւորեկ սպանսեկ զճարմանեկ, եւ զնաչ Փայիխառ մանկան ի գիշերի եւ սպանսեկ զգիխաւորեկ, եւ զճարմանեկ հսնեկ ի քանսեկ, եւ եշեալ ի փայտեկ, եւ փայտեկ:

Այն զօրքն հա գրեցաւ եւ գլխաւորն այն ,
Ի մէկ մարդու ձեռաց նոքա եղին խան .
Սըրտերն է զայրացել անգաղար որսան ,
Փրնտուն եւ չի գանուն սեւերես դառնան :

(fol. 66 vo) Յիշեն զպահլաւան Փօլատն ի Հընդին ,
Եւ նոր սըրտերն էր ձօշ եւ արիւն շարժին .
Ասեն թէ կամք ի լուր վասըն Ֆարմանին ,
Խընդրել արքայէն սպանանել խորհէին :

Ասեն թէ մեզ հրաման չի տայ մեծ արքայն ,
Նայ մենք ի մէջ բանախն խոցենք զնա մահ-
ուան .

Չկամի մեծ թագաւորն նորա փոխան ,
Սպանել նորա համար մանուկ հազարան :

Մանուկըն Փայիփառ լըսէ 'ւ ի լուռ գայ ,
Հանէ զնա ի բանտէն որ մարդ չիմանայ ,
Կըտրէ զոտիցն երկաթն եւ արծակէ զնա ,
Ինք շուտ զերթ ըզկայծակ ի քաղաքն երթայ :

Հագնի Փայիփառ(1) զըրեհ 'ւ ի ձեռնն դանձար ,
Կապէ աղէկ զըրեհ եւ զթուրըն կամար ,
Մըտնու ի մէջ զօրացն գաղտուկ եւ կամկար ,
Սպանէ ըզգըլխաւորն եւ ելնէ ճարտար :

Երթայ մօտ առ Ֆարման եւ խապար տանի ,
Կախէ զնա ի պարիսպն ի վայր թէ' Իջի' ,
Ինքն այլ իջնու ի վայր եւ առ նա կանգնի ,
(fol. 67) Ասէ ընդ ո՞ր երթայ կամ ո՞ւր կայ տեղի :

Առնու զՖարմանն ի յուսն եւ ճարտար վազէր ,
Գիշերն ի բուն հրեղէն ոտիւքն քալէր(2) ,
Երբ գիշերն անցանէ եւ սուաւօտէր ,
Հասնի յեզրը մորուն երբ լոյսըն ծագէր :

Ետես ծառ մի որ խիտ էր նա բարձրացել ,
Ունէր թանձրը տերեւ որ ծառն էր ծածկել .
Ասաց Ֆարման մանկանն այն ծառն ելանել՝
Ինչ ուր ինքըն երթայ այլ տեղ տեսանել :

Երթայ ի մէջ մորուն(3) ճանապարհ երկար ,
Մինչ եզր գրտանէ մորուն եւ վըճար(4) ,
Ետես յեաւըն մի բարձրը քար եւ զիժար ,

(1) Ձեռ. մէջ՝ Փօլատ . (2) Ձեռագր. մէջ՝ գալէր :
(3) Ձեռ. մէջ՝ մարուն : (4) Ձեռագ. մէջ՝ վիճար :

Գըլուխ լերինն հոտս որ ի շէնըն կայր :

Երթայ եւ տեսանէ գեղեցիկ ամրոց ,
Գաջանց բընակութիւն եւ մանկանց կեցոց ,
Անուշահամ ակունք բըղխումն աղբիւրոց ,
Չի կայ մարդ կենդանի ի հոն բնակելոց :

Դառնայ եւ գայ ընդ այն ուստի գնացել է .
Գազանք յափշտակողք(1) նորա պատահէ .
Բայց սուր էր նա ոտիւքն որ իրք չի հասնէ .
Երթայ եւ ըզՖարման ի հոն գրտանէ :

(fol 67vo.) Ասէ՝ Տեսի քեզ տեղ ամրոց աննըման ,
Ի յայտ ժամանակի անծանօթ մարդկան .
Գազանք են մարդակերպ ճանփուն պահապան ,
Վտան այնորիկ տեղիք անչէն անբնական :

Արի որ զքեզ տանիմ ի յայտ գիշերիս ,
Չի հանդարտին դազանքն քընով ի մորիս .
Առնում ըզքեզ երթամ որ դուն չերեւիս .
Տանիմ զքեզ անդ պահեմ որ դուն չի գըտուիս :

Առնու զՖարմանն ի յուսն եւ ճանփու մըտնէ ,
Ելնէ նա ի մորուն եւ անդ հասանէ :
Տանի գամչն չինուածքն ի նա ցուցանէ ,
Թէ՛ « Աստ կեցիր ուրախ մարդ հոս գալու չէ :

Բողորս ամէն մորի է թանձր անաւոր ,
Եւ չորս աւուր ճանփայ զըժար է եւ քար .
Գազանք են արծակեալ շուրջ գան անդաղար ,
Հաւ չեն թողել որ աստ յօղովն ի տես գար :

Բայց ես ճարտարութեամբ զայս քեզի գըտի ,
Առ քեզ բընակութիւն դու նըստել կեցի' : »
Երթայ որսայ եղունք եւ երէ վայրի ,
Բերէ (fol. 68) մանկան համար վասըն կերակրի :

Երբայ Փայիփառն եւ բերե զընկերֆն անոր եւ
երբայ ի ֆաղսֆն եւ զսակե գղուսը քազաւորին
եւ պասմե վասն մարմանին թե զի՛նչ եղիւ եւ
թե ո՞րպէս զնաց :

Դառնայ երթայ ի շուրջ գայ եւ գրտանէ
Չընկերքըն միարան եւ նոցա պատմէ .

(1) Ձեռ. մէջ՝ ափեսակողք :

Չոր ինչ հանդիպեցաւ իրենցըն ցուցանէ ,
Չիրեն տանիրն Ֆարմանն թէ ո՛ւր տարել է :

Ելնէ նա ընկերօքն առ Ֆարմանն երթայ ,
Ժողկէ ղընկերքն ամենն հաւսար ի մօտ գայ ,
Չթողու որ մարդ ի դուրս ի մորին երթայ ,
Որ չլինին գազանաց կերակուր նորա :

Լըցել է բարութեամբ տեղիքն որ հոն կայն ,
Բազում ազգ կերակուր անոյշ զանազան .
Երթայ մօտ ի քաղաքն յերկրին երեւան ,
Առնու եւ թէզ գառնայ զինչ որ պիտենան :

Չինչ իրք որ մեծութեան զամենն արար սար ,
Ըզգեստ թէ կերակուր այլ զինչ պիտենար .
Ելից զինչ արարածըս բարութիւն կար ,
Ասաց՝ Ուրախ կեցիք , մի՛ կենաք յազար :

(fol.68vo) Դըստեր թագաւորին նա խընդրէ հընար ,
Թէ որպէս զնա բերէ Ֆարմանին համար ,
Չի նա շատ սէր ունէր եւ հասրաթով կար ,
Ուզէր(1) ըզնա առ ինք սըրտովըն յօժար :

Մանուկըն Փայրիփառ դառնայ ի յետ գայ ,
Մըտնու նա ի քաղաքն ուր թագաւորն կայ ,
Փոխէ զկերպն եւ զաղքատ մուրակ լինենայ ,
Այն վայրքըն(2) բընակի ուր աղջիկըն կայ :

Երթայ օր մըն անգուման ի տունըն կանգնի ,
Ի կերպ աղքատ մարդու եւ մուրացկանի .
Ոնց որ տեսնու ճանչնայ զմանուկըն յայտնի ,
Գիտաց նա ըզՖարմանն որ էր կենդանի :

Ասաց՝ Գընա՛ գիշերս արեկ մօտ առ իս ,
Գաղտուկ հանց որ չտեսնու մարդ աստընվորիս .
Կամիմ զքեզ մէն տեսնուլ ի յայս գիշերիս ,
Որ ես լըսեմ խապար մ՛որ գայ հոգիս յիս :

Իբրեւ զիսաց թե Ֆարման կենդանի է , գրե
թուղթ առ նա , գոր առեալ Փայրիփառ մանուկն
սարաւ եւ այլ բազում ինչս :

Գըրէ թուղթ առ Ֆարմանըն հառաչելով ,
Գըրէ ողորմագին (fol.69) արտասովէ լալով ,

(1) Ձեռ. մէջ՝ Յուզէր . (2) Ձեռ. մէջ՝ վարկն :

Բարեւ խըրկէ նորա սըրտի կարօտով ,
Յուցնէ զսէրըն սըրտին ըզգալն ըշտապով(1) .

Ասէ՛ Չուենիմ հոգի եւ չեմ կենդանի ,
Եւ հուր կայ ի սըրտիս անանց կու այրի ,
Գըտի ըզքեզ յաժան եւ շուտ կորուսի ,
Լալով ի շուրջ կուգամ թէ ո՛ւր գըտանի :

Ճարակ թէ գըտանես որ ես առ քեզ գամ ,
Ի շատ տրտմութենէս ես ուրախանամ ,
Նայ ինձ այս հոգու տալիս է եւ սըրտի կամ ,
Թէ չէ ինձ հասանէ մեռանելոյ ժամ :

Յուսկայ(2) տըրտում եմ ես՝ Լ անզադար եւ
լամ ,
Թէ զիս առ քեզ ուզես , լուծվ է եւ քարամ ,
Նայ քան զիմ հոգուն տալըն մի՛ տեսնուլ գամ(3) .
Որ զիմ սէրս ի քո սիրտդ խընդալով ես տամ :

Մանուկըն Փայրիփառ դաղտուկ առ ինք գայ ,
Ի մուծըն գիշերով ոչ ոք չիմանայ .
Ասէ՛ Ա՛ռ մալ սակի զինչ որ ինձի կայ ,
Եւ զթուղթդ , եւ շուտ գընա՛ եւ գարձի՛ր այլ-
վայ :

Ելնէ մանուկըն քաջ ոտիքն եւ ճեմի ,
Եւ առ Ֆարման մանուկն խընդալով հանի .
Ասէ թէ՛ Աւետեաց խապար քեզ բերի ,
(fol.69vo) Գըտի գով կ՛ուզէիր , գու ուրախ կեցի՛ :

Պատմէ զիւր ըզգընալն եւ գըտնուլ ըզնա ,
Չամէնն որպէս եղեալ է պատմէ նորա ,
Յուցնէ զթուղթըն գըրած յինքն տայ թէ կարդա՛ ,
Եւ այլ զինչ որ տըւել է մալ եւ խըզինա :

(Շարունակելի)

(1) Ձեռ. մէջ՝ յրեսապսլ . (2) Ձեռ. մէջ՝ Ուսկայ :
(3) Ձեռ. մէջ՝ քամ :



Le Gérant : FRÉDÉRIC MACLER

Imp. D. DOGHRAMADJIAN
18, Rue des Gobelins, Paris.

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ ԱՆԱՀԻՏ

- Թիւ 1. — Անարոյ Ֆրանս . Եպիկուրի պարսեզը , (Հատուածներ) , թարգմանեց Ա. Չօպանեան ,
հեղինակին կենդանագրով . Գին 1 ֆրանք :
- Թիւ 2. — Այֆրէս սը Վինետի Բերբուածները , հեղինակին կենդանագրով , թարգմանեց Ա. Չօ-
պանեան : Գին 1 ֆրանք :
- Թիւ 3. — Օւնար Խայեանի Քառեակները , ըննական ուսումնասիրութեամբ մը պարսկերէն բնա-
գրէն թարգմանեց Գ. Փառնակ . Գին 3 ֆրանք :

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ « ԱՆԱՀԻՏ »Ի

- Թիւ 1. — Նահապէտ Բուչակի Դիւանը , սիրոյ երգեր , խրատական եւ այլաբանական երգեր , պան-
դուխտի երգեր . Գննական ուսումնասիրութեամբ մը հրատարակեց Ա. Չօպանեան . 3. ֆր .
- Թիւ 2. — Մկրտիչ Պեշիկբաշչեանի Բերբուածներն ու ճառերը , ծանօթագրութիւններով հրա-
տարակեց Ա. Չօպանեան . 4 ֆր . 50

ՃՐԱՆՍԵՐԷՆ ԳՐԳԻՐ

LES MASSACRES D'ARMENIE, témoignage des victimes; recueil de lettres, traduites en français par A. TCHOBANIAN: préface de GEORGES CLEMENCEAU, Librairie du Mercure de France. 3 ֆր. 50

L'ARMENIE, SON HISTOIRE, SA LITTERATURE, SON ROLE EN ORIENT par A. TCHOBANIAN, avec une introduction d'ANATOLE FRANCE. Librairie du Mercure de France, 1 ֆր .

ZEITOUN, DEPUIS LES ORIGINES JUSQU'A LA GRANDE INSURRECTION DE 1895 par AGHASSI: Traduction française d'A. TCHOBANIAN: préface de VICTOR BERARD Librairie du Mercure de France. 3 ֆր. 50

POEMES ARMENIENS ANCIENS et MODERNES, traduits en français par A. TCHOBANIAN, et précédés d'une étude de GABRIEL MOUREY sur la Poésie et l'Art arméniens. 2 ֆր .

CHANTS POPULAIRES ARMENIENS, traduction française avec une introduction par A. TCHOBANIAN; préface de PAUL ADAM. Librairie Paul Ollendorff. 3 ֆր 50

Ouvrage couronné par l'Académie Française

ԱՆԱՀԻՏ Ի բաժանորդագրութեան պայմանները

Անանիսը կը հրատարակուի ամիսը անգամ մը :
 Բաժանորդագիրն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա), 12 ֆրանք (օտար երկիրներ ,
 2 տոլար (Ամերիկա) , 5 ռուպլի (Ռուսիա) :
 Վեցամսեայ՝ 5 ֆրանք (Ֆրանսա), 6 ֆրանք (օտար երկիրներ) , 1 տոլար (Ամերիկա) ,
 3 ռպլ. (Ռուսիա) :
 Յօդուած եւ բաժանորդագիրն ղրկել հետեւեալ հասցէին :

A. TCHOBANIAN

17, Rue La Bruyère

Paris

« ԱՆԱՀԻՏ » Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Բազու	Տիկին Մարի Սունդուկեանց
Ռուսճուգ	Պարոն Գառնիկ Մաղմանեան
Գահիրէ	» Միհրան Աբգարեան
Ֆիլիպէ	» Թազուր Հինդլեան
Թեհրան	» Լեւոն Բաբայեանց (Տեսուչ Թեհրանի Հայոց երկսեռ դպրոցներուն)
Նիւ-Եօրք	» Պետրոս Գաբրիէլեան
Ուօքեկըն	» Տ. Մասեան
Իսթ Գէմպրիճ	» Գաբրիէլ Մուչէղեան
Իսթ Ուօթըրթաուն	» Կ. Մալխասեան
Սէնթըրլ Ծօլս	» Նշան Մինասեան
Զիքալօ	» Ս. Մուրատեան
Նեչուէ	» Յ. Արողեան
Ուօթըր	» Մինաս Գաբրիէլեան
Ֆրէզնօ	» Գ. Նալպանտեան
Դաւրէթ	» Մ. Զարաֆեան
Պաթում	» Մամաջանեան
Նիւ Պրիթէյն	» Ս. Սաչաքլեան
Փրովիտէնս	» Աւագ Կարապետեան
Թիֆլիս (եւ շրջակայք)	» Սեդրակ Կիրակոսեան (Վանքի պերիուոկ , առն Յակոբջան- սանի , N. 15)